

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

Ակտի համարը և անվանումը՝	<b>№ 260, Բնապահպանական և Սոցիալական Ռիսկերի կառավարման ուղեցույց</b>
Ընդունող մարմինը՝	<b>Տնօրինություն</b>
Ընդունման ամսաթիվը և հիմքը՝	<b>12.07.2023թ.-ի թիվ 50- Լ որոշմամբ</b>
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝	<b>13.07.2023թ.</b>
Խմբագրության հերթական համարը՝	<b>02</b>
Կիրառող ստորաբաժանում(ներ)ը՝	<b>ՎԴ, ԲԶԴ, ԱՖԹՀԴ</b>
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը՝	<b>Վարկավորման դեպարտամենտ, Բիզնեսի զարգացման դեպարտամենտ</b>
Հրապարակայնությունը՝	<input type="checkbox"/> հրապարակվող <input checked="" type="checkbox"/> սահմանափակ <input type="checkbox"/> գաղտնի

## Հապավումներ

CBD/ԿԲԿ	Կենսաբանական Բազմազանության մասին Կոնվենցիա
E&S/ԲՍ	Բնապահպանական և Սոցիալական
ESIA/ԲՍԱԳ	Բնապահպանական և Սոցիալական Ազդեցության Գնահատում
ESAP/ԲՍԳՊ	Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլան
ESDD/ԲՍՀՈՒ	Բնապահպանական և Սոցիալական Համալիր Ուսումնասիրություն
ESMS/ԲՍԿՀ	Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգ
ESMP/ԲՍԿՊ	Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
FPIC/ԱՆՏՀ	Ազատ, Նախնական և Տեղեկացված Համաձայնություն
GCF/ԿԿՀ	Կանաչ Կլիմայի Հիմնադրամ
GEF/ԳԷՀ	Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամ
GRM/ԲԲՄ	Բողոքների բավարարման Մեխանիզմ
ODA/ԶՊԱ	Զարգացման Պաշտոնական Աջակցություն
MEL/ՄԳՈՒ	Մոնիթորինգ, Գնահատում և Ուսուցում
NAPs/ԱԱՊ	Ազգային Ադապտացիոն Պլաններ
NDCs/ԱՄՆ	Ազգային Մակարդակով Ներդրումներ
SDCs/ԿԶՆ	Կայուն Զարգացման Նպատակները
UNEP/ՄԱԿ-ի ԲՆ	ՄԱԿ-ի Բնապահպանական Նախագիծ
UNFCCC/ ԿՓ ՄԱԿ-ի ՇԿ SEAH /ՍՇՉՍՈ	Կլիմայի Փոփոխության Մասին ՄԱԿ-ի Շրջանակային Կոնվենցիա Սեռական շահագործում, չարաշահում և սեռական ոտնձգություն
GBV/ԳԲ	Գենդերային բռնություն
IPP/IPPF-ԲԺՆ/ԲԺՆՇ	Բնիկ Ժողովուրդների նախագծեր/Բնիկ Ժողովուրդների նախագծերի շրջանակ
FSC ԱԿԽ	Անտառների կառավարման խորհուրդ

## Բովանդակություն

Հապավումներ.....	
Բովանդակություն.....	
1. Ներածություն.....	5
2. Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգի (ԲՍԿՀ) կառուցվածքը.....	5
2.1. ԲՍԿՀ-ի տարրերը.....	6
2.2. ԲՍԿՀ-ի ներդրման պահանջները.....	7
2.2.1. Բանկը.....	7
2.2.2. Հաճախորդները.....	7
2.3. Գործունեության բացառված տեսակները.....	8
3. Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն.....	9
4. Բնապահպանական և սոցիալական չափանիշներ.....	9
5. Բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրություն.....	10
5.1. Ներածություն.....	10
5.2. Գնահատում.....	10
5.3. Ազատում.....	11
5.4. Համալիր ուսումնասիրության հետագա աշխատանքները, որոնք պահանջվում են A և B կարգերի նախագծերի համար.....	12
5.4.1. Բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլան. Ներածություն.....	12
5.4.2. Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան. A կարգի նախագծերի արդյունքները.....	12
5.4.3. Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան. B կարգի նախագծերի արդյունքները.....	13
5.4.4. Բանկի կողմից բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրման մասին հաշվետվության ավարտում.....	13
5.5. Բողոքների բավարարում.....	13
5.6. Մոնիթորինգ և հաշվետվություններ.....	15
6. ԲՍԿՀ պահանջների ինտեգրում Ռիսկերի կառավարման գործող ընթացակարգերին.....	15
7. ԲՍԿՀ պաշտոնատար/պատասխանատու անձանց պարտականությունները.....	19
8. Հավելված I. Հատուկ պայմաններ առևտրի ֆինանսավորման համար.....	19
9. Հավելված II. Բնապահպանական և սոցիալական չափանիշներ.....	21
9.1. Կատարողականի չափանիշ 1. Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում.....	21
9.2. Կատարողականի չափանիշ 2. Աշխատանք և աշխատանքային պայմաններ.....	22
9.3. Կատարողականի չափանիշ 3. Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում.....	22
9.4. Կատարողականի չափանիշ 4. Համայնքի առողջությունը և անվտանգությունը.....	23
9.5. Կատարողականի չափանիշ 5. Հողի ձեռքբերում և հարկադիր վերաբնակեցում.....	24

9.6. Կատարողականի չափանիշ 6. Կենսաբազմազանության պահպանում և կայուն կառավարում	26
9.7. Կատարողականի չափանիշ 7. Բնիկ ժողովուրդներ.....	26
9.8. Կատարողականի չափանիշ 8. Մշակութային ժառանգություն.....	27
10. Հավելված III. ԲՍԿ գնահատման հարցաթերթիկներ.....	30
11. Հավելված IV. Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանի (ԲՍԳՊ) ձևանմուշը/Հավելվածը .....	34
12. Հավելված V. Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) առաջարկվող ձևանմուշը/ Հավելվածը.....	35
13. Հավելված VI. ԲՍԿՊ ձևանմուշը/ Հավելվածը .....	38
14. Հավելված VII. Ինդիկատիվ ձևանմուշ/նախագիծ գործընթացի շրջանակի համար (մուտքի սահմանափակումներ) .....	41
15. Հավելված VIII. Նպատակային բնապահպանական և սոցիալական գնահատման նախագիծ .....	42
16. Հավելված IX. ԲՍՀՈՒ ստուգիչ ցանկի ձևանմուշ.....	
17. Հավելված X. Առողջության և անվտանգության համառոտ պլան .....	
18. Հավելված XI. Սոցիալական գնահատում և IPP/IPPF բնիկ ժողովուրդների համար .....	

## **1. Ներածություն**

ԱրմՍվիսԲանկ ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») ներկայացնում է սույն Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգը (ԲՍԿՀ)՝ համաձայն զարգացման միջազգային ֆինանսական հաստատությունների (ՋՄՖՀ) պահանջների որպես մասնակից բնապահպանական և սոցիալ ռիսկերի ռացիոնալ կառավարման և կայուն զարգացմանն իր հանձնառության շրջանակներում:

Բանկը հանձնառու է հիմնավորված ներդրումներ կատարել և ակնկալում է նույն հանձնառությունն իր Հաճախորդներից:

Սույն փաստաթղթի կառուցվածքը հետևյալն է.

- \* Բաժին 2-ը նկարագրում է Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի կառուցվածքը:
- \* Բաժիններ 3, 4 և 5-ը նկարագրում են ԲՍԿՀ-ի անհրաժեշտ բաղադրիչ մասերը:
- \* Բաժին 6-ը կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչպես պետք է բնապահպանական և սոցիալական ռիսկերը ինտեգրվեն Բանկի ռիսկերի կառավարման համապատասխան ընթացակարգերի մեջ:
- \* Բաժին 7-ում շարադրված են Բանկի ԲՍԿՀ պատասխանատուի պարտականությունները:
- \* Բաժիններ 8-ից մինչև 16-ը բաղկացած են համապատասխան Հավելվածներից:

Սույն ԲՍԿՀ-ում «նախագիծ» տերմինը վերաբերում է գործարար գործունեությանը, որի համար Հաճախորդը ֆինանսավորման համար դիմում է Բանկին՝ անկախ գործարքի տեսակից: Բանկի գործունեությունն ընդգրկում է հաճախորդներին առաջարկվող ֆինանսավորման տարբեր տեսակների շարք, այդ թվում նաև՝ փոխառությունների, լիզինգի տարբեր տեսակներ, վարկային գծեր և երաշխիքներ, օվերդրաֆտեր և այլն:

ԲՍԿՀ-ն կիրառվում է ֆինանսավորման բոլոր տեսակների, այդ թվում նաև՝ առևտրի ֆինանսավորման համար: Հավելված 1-ում շարադրված են առևտրի և մատակարարումների շղթայի ֆինանսավորման գործառնություններին վերաբերվող հատուկ դրույթները:

## **2. Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգի (ԲՍԿՀ) կառուցվածքը**

### **2.1. ԲՍԿՀ-ի տարրերը**

ԲՍԿՀ-ն ապահովում է համակարգված գնահատումներ Բանկի կողմից ֆինանսավորվող նախագծերի համար շրջակա միջավայրի և սոցիալական ոլորտի վրա հավանական անբարենպաստ ազդեցության գնահատման նպատակով՝ բացասական ազդեցությունները բացառելու կամ նվազագույնի հասցնելու և դրական ազդեցությունները խթանելու համար:

ԲՍԿՀ-ն նաև ապահովում է ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումների իրագործման և արդյունավետության մոնիթորինգը և նախագծերի իրագործման ընթացքում առաջացող ցանկացած ազդեցությունների վերացումը:

Գծապատկեր 1-ում ներկայացված է ԲՍԿՀ-ի կառուցվածքի մոդելը: Սույն սխեման համապատասխանում է լավագույն միջազգային պրակտիկային:

## ԲՄԿԶ

### Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների կառավարման հանձնառություններ և սկզբունքներ, կայունության արդյունավետության և արդյունքների բարձրացում

### Բնապահպանական և սոցիալական չափանիշներ

### Բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրություն

Մտանձնացում և դասակարգում  
Գնահատում և կառավարում  
Շահագրգիռ կողմերի հետ ներգրավվածություն և  
արձագանքման մեխանիզմներ  
Մոնիթորինգ, հաշվետվություններ և պահանջների  
կատարում

### Գծապատկեր1. Բնապահպանական և սոցիալական կառավարման առաջարկվող համակարգի տարրերը

Կառուցվածքը բաղկացած է երեք փոխկապակցված մասերից:

**ԲՄԿԶ-ի քաղաքականության** մասն ապահովում է Բանկի հանձնառությունը, որոշումների կայացման և արդյունքների մեջ ներառելով բնապահպանական և սոցիալական խնդիրները, հաստատում է սկզբունքները, պահանջները և պատասխանատվությունը՝ այդ պարտավորությունները կատարելու համար: Բարձր մակարդակի բնապահպանական և սոցիալական քաղաքականությունները, որպես կանոն, սահմանում են նպատակները և սկզբունքները, կիրառման բնագավառը, ինչպես նաև ինստիտուցիոնալ և կիրառական մեխանիզմները: Դրանք սովորաբար ընդունվում են և իջեցվում են կառավարչական մակարդակի վրա և դառնում են պարտադիր պահանջ ցանկացած նախագծի/ծրագրի համար:

**ԲՄԿԶ-ի երկրորդ մասն** է հանդիսանում բնապահպանական և սոցիալական չափանիշների (ԲՄԶ) հավաքակազմը: Դրանք սահմանում են կոնկրետ թեմատիկ պահանջներ նախագծերի մշակման և իրագործման նկատմամբ և ծառայում են որպես ուղեցույց ինչպես նախագծի մշակման մեջ ներգրավված Բանկի աշխատակիցների համար, այնպես էլ նախագծի իրագործման համար պատասխանատու Բանկի հաճախորդների/փոխառություններ ստացողների համար:

**ԲՄԿԶ-ի երրորդ մասը** գործառնական ընթացակարգերի և պահանջների հավաքածու է, որոնք թույլ կտան իրականացնել համապատասխանության ուսումնասիրություն: Դրանք ներառում են.

- Բացառություններ
- Գնահատում և դասակարգում
- Գնահատում և կառավարում
- Շահագրգիռ կողմերի հետ ներգրավվածություն և արձագանքման մեխանիզմներ
- Տեղեկատվության հասանելիություն
- Մոնիթորինգ, հաշվետվություններ և պահանջների կատարում

հնչպես պարզ կդառնա հաջորդ բաժնից, գործող քաղաքականության պահանջների կատարումը Բանկի հաճախորդի պատասխանատվությունն է:

## 2.2. ԲՍԿ-ի ներդրման պահանջները

ԲՍԿ-ն կիրառվում է Բանկի նախագծերի հաստատման ամբողջ ցիկլի ընթացքում՝ համաձայն ազգային նորմատիվ պահանջների, բացառությամբ՝ սույն փաստաթղթի Բաժին 5.3-ում նկարագրված դեպքերի: Նկարագիրը, թե՛ հնչպես ԲՍԿ-ի պահանջները պետք է ինտեգրվեն Բանկի գոյություն ունեցող ռիսկերի կառավարման ընթացակարգերի մեջ, շարադրված է Բաժին 6-ում: Ընդհանուր առմամբ, Բանկը և նրա Հաճախորդներն ունեն տարբերվող ներդրման պատասխանատվություններ՝ համաձայն ստորև շարադրվածի:

### 2.2.1. Բանկը

Կատարելով սույն ԲՍԿ-ում նշված գնահատումները՝ Բանկը կկարողանա ներկայացնել ապացույցներ առ այն, որ գործադրում է առավելագույն ջանքեր՝ բնապահպանական և սոցիալական խնդիրների բավարարման համար, որքանով դա հնարավոր է՝ հաշվի առնելով նախագծի/շահագրգիռ կողմերի կառուցվածքը, նախագծերի բնույթը և կիրառման համատեքստը: Բանկը պատասխանատու է հետևյալի համար.

- (i) Բնապահպանական և սոցիալական չափանիշների և ընթացակարգերի սահմանում, որոնք պետք է պահպանի Հաճախորդն իր նախագծերի իրականացման ընթացքում (տես՝ Բաժին 4 և Հավելված II):
- (ii) Քննության սկզբնական փուլում Բանկը կիրառելու է իր Բացառությունների ցանկը (տես՝ Բաժին 2.3. Գործունեության բացառված տեսակները): Եթե նախագիծը ներառում է բացառված գործունեություն, հնարավոր Հաճախորդը իրազեկվելու է այդ մասին, իսկ նախագծի ֆինանսավորման մասին հարցի հետագա քննարկումը դադարեցվելու է:
- (iii) Եթե Բանկը նշում է, որ նախագիծը չի ներառում բացառվող գործունեություն, հնարավոր Հաճախորդը իրազեկվելու է առ այն, որ Բանկը (կամ նրա աշխատակիցը) գնահատման գործընթացի շրջանակներում (տես՝ Բաժին 5. Բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրություն) անցկացնելու է ԲՍՀՈՒ: Նման համալիր ուսումնասիրությունն իր մեջ ներառելու է վերլուծություն առ այն, թե որքան ճիշտ էին Հաճախորդի կողմից գնահատվել և հեռացվել բնապահպանական և սոցիալական ռիսկերը առաջարկի նախապատրաստման փուլում, այնուհետև դրանց դասակարգումը և կիրառելի գնահատումների/ուսումնասիրությունների/ կառավարման պլանների պահանջը՝ կիրառելի լինելու դեպքում:
- (iv) Կախված նախագծի բարդությունից՝ Բնապահպանական և Սոցիալական Համալիր ուսումնասիրությունը կարող է լինել՝ փաստաթղթային հետազոտում, կամ ՎԴ աշխատակցի կողմից այց, կամ կարող է պահանջել տեխնիկապես որակավորված մասնագետի կամ խորհրդատուի կողմից անցկացվող բազմակողմանի համալիր գնահատում:
- (v) Բանկն անցկացնելու է Հաճախորդների նախագծերի բնապահպանական և սոցիալական ազդեցության մոնիթորինգ: Գործունեության արդյունքները կապված են լինելու նախագծի կանոնավոր մոնիթորինգի հետ:

### 2.2.2. Հաճախորդները

- (i) Հաճախորդները պետք է կարողանան ներկայացնել ԲՍԿ-ի պահանջներին համապատասխանությունը՝ համաձայն Բաժին 5-ի՝ Բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրություն:
- (ii) Պոտենցիալ Հաճախորդները պատասխանատու են հնարավոր բնապահպանական և սոցիալական ռիսկերի/ազդեցությունների բացահայտման և գնահատման համար:
- (iii) Բանկը Հաճախորդներից պահանջում է կառավարել կամ մեղմացնել ԲՍՀՈՒ հայտնաբերված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, որպեսզի Բանկը կարողանա շարունակել գործարքը: Հաճախորդները պետք է մշակեն ԲՍՀՈՒ-ով հայտնաբերված խնդիրների բավարարման

նախագիծ և ներկայացնեն այն Բանկին՝ Բնապահպանական և սոցիալական ոլորտներում գործողությունների պլանի (ԲՍԳՊ) տեսքով: Պլանի մեջ պետք է նշված լինեն նախագիծը պահանջներին համապատասխանեցնելու համար բոլոր անհրաժեշտ գործողությունները: Նաև պետք է համաձայնեցված լինեն յուրաքանչյուր նշված գործողության ավարտման նպատակային ամսաթվերը:

- (iv) Հնարավոր Հաճախորդները պատասխանատու են ապահովելու շահագրգիռ անձանց պատշաճ ներգրավումը (այդ թվում նաև, եթե կիրառելի է՝ ուղղակի և անուղղակի շահագրգիռ անձանց և շահառուների):
- (v) Հնարավոր Հաճախորդները պետք է տրամադրեն ամբողջ պահանջվող տեղեկատվությունը, իսկ Բանկը, նախքան գործունեության ֆինանսավորման մասին Բանկի կողմից որոշման ընդունումը, պետք է գա այն եզրակացության, որ նախագիծը համապատասխանելու է բոլոր կիրառելի պահանջներին:
- (vi) Ֆինանսավորման մասին բոլոր համաձայնությունները պարունակելու են համապատասխան բնապահպանական հայտարարությունները, երաշխիքները և պարտավորությունները, որոնք պահանջում են, որ նախագիծը բոլոր էական տեսակետներից համապատասխանեն ընդհանուր օրենքներում ամրագրված շրջակա միջավայրի, առողջության պահպանման, անվտանգության և սոցիալական ոլորտներում հայաստանյան պահանջներին, և իրականացվեն համաձայն ցանկացած կիրառելի պահանջների:

### 2.3. Գործունեության բացառված տեսակները

Բանկն ինքն է որոշում, թե ինչ տեսակի նախագծերը չի ֆինանսավորելու: Ընդհանուր առմամբ, Բանկը չի ֆինանսավորելու այն նախագծերը, որոնք միտումնաբար վատթարացնում են բնական միջավայրը կամ կապված են ՀՀ օրենսդրությամբ կամ կանոնակարգերով, կամ միջազգային կոնվենցիաներով և համաձայնագրերով որպես ապօրինի սահմանված, կամ միջազգային արգելքներին ենթարկված ցանկացած արտադրանքի արտադրության կամ առևտրի կամ գործունեության հետ:

Միջազգային ֆինանսական կառույցներից ֆինանսավորվող նախագիծ/ծրագիրը Բանկը չի ֆինանսավորում, եթե այն ներառված է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի բացառված գործունեության տեսակների ցանկում: Դրանք են.

- Ցանկացած արտադրանքի արտադրություն կամ առևտուր կամ գործունեության տեսակներ, որոնք ապօրինի են համարվում՝ համաձայն ընդունող երկրի օրենքների և կանոնակարգերի, միջազգային կոնվենցիաների և համաձայնագրերի, կամ ենթարկվում են միջազգային արգելամիջոցների, այն է՝ դեղամիջոցներ<sup>1</sup>, պեստիցիդներ/հերբիցիդներ<sup>2</sup>, օզոնային շերտը քայքայող նյութեր<sup>3</sup>, ՊԲԲ-ներ<sup>4</sup>, վտանգավոր քիմիկատներ<sup>5</sup>, վայրի ֆլորա և ֆաունա կամ ապրանքներ, որոնք կարգավորվում են համաձայն CITES-ի (Վայրի կենդանական և բուսական աշխարհի՝ ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող տեսակների միջազգային առևտրի կոնվենցիա)<sup>6</sup>, թափոնների և արտադրական թափոնների անդրսահմանային առևտուր<sup>7</sup>:
- Զենքի և զինամթերքի, ներառյալ ռազմականացված նյութերի արտադրություն կամ առևտուր<sup>8</sup>,
- Ալկոհոլային խմիչքների (բացառությամբ գարեջրի և զինու) արտադրություն կամ վաճառք,
- Ծխախոտի արտադրություն կամ առևտուր<sup>7</sup>,
- Դրամախաղեր, կազինոներ և դրանց հավասարեցված ձեռնարկություններ,
- Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ առևտուր: Դա չի վերաբերում բժշկական որակի վերահսկման (չափման) սարքավորումների և ցանկացած այլ սարքավորման գնմանը, որտեղ ռադիոակտիվ աղբյուրը համարվում է չնչին և/կամ պատշաճ կերպով պաշտպանված,

<sup>1</sup> Փուլ 1-ի փուլի միջինում կամ արգելի ենթակա դեղատեսակների ցանկը հասանելի է <http://www.who.int/qaq> կայքում:  
<sup>2</sup> Փուլ 1-ի փուլի միջինում կամ արգելի ենթակա պեստիցիդների/հերբիցիդների ցանկը հասանելի է <http://www.pic.int/> կայքում:  
<sup>3</sup> Ստրատոսֆերայի օզոնի կեն ռեակցիայի մեջ մտնող և քայքայող թթվածինի միացությունների ցանկը, որոնք հանգեցնում են լայն կրթությունը օդաբան անցքի, ինչպես է Միջազգային կազմակերպության մեջ՝ կրճատման նպատակով ցուցանվող և օդաբանության փուլ 1-ի փուլի դրոպերի մասին ժամկետային կեն փաստի: Տեղեկատվությունը հասանելի է <http://www.unep.org/ozone/montreal.html> կայքում:  
<sup>4</sup> Բույսեր արգելափակման քիմիկատների կազմից: Գործընթացային քիմիկատներ, համաձայն կարգ էն հայտարարվել 1950-1985-ական թվականների ընթացքում կենդանական և արտադրական արտադրությունների և բաշխել սարքերի մեջ: Վտանգավոր քիմիկատների ցանկը հասանելի է <http://www.pic.int/> կայքում:  
<sup>5</sup> Վտանգավոր քիմիկատների կազմից: Գործընթացային քիմիկատներ, համաձայն կարգ էն հայտարարվել 1950-1985-ական թվականների ընթացքում կենդանական և արտադրական արտադրությունների և բաշխել սարքերի մեջ: Վտանգավոր քիմիկատների ցանկը հասանելի է <http://www.pic.int/> կայքում:  
<sup>6</sup> CITES-ի ցանկը հասանելի է <http://www.cites.org/> կայքում:  
<sup>7</sup> Բնական կենդանական և բուսական աշխարհի՝ ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող տեսակների միջազգային առևտրի կոնվենցիա:  
<sup>8</sup> Բնական կենդանական և բուսական աշխարհի՝ ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող տեսակների միջազգային առևտրի կոնվենցիա:



- Ասբեստի չկապված մանրաթելերի արտադրություն կամ առևտուր: Դա չի վերաբերում սոսնձված ասբեստ-ցեմենտի թիթեղների գնմանը և օգտագործմանը, որոնցում ասբեստի պարունակությունը 20%-ից ցածր է,
- Արտադրություն կամ գործունեություն, որը ներառում է հարկադիր աշխատանքի վնասակար կամ շահագործող ձևեր<sup>10/</sup> երեխաների վնասակար աշխատանք<sup>11</sup>,
- Փայտանյութի կամ այլ անտառային ապրանքների արտադրություն կամ առևտուր, բացառությամբ կայուն կառավարվող անտառներից:

### 3. Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն

Բանկը չի ֆինանսավորում այն նախագծերը, որոնք անհարկի վնաս են հասցնում շրջակա միջավայրին, խոցելի համայնքներին կամ կանանց, կամ նպաստում են աղքատությանը, սոցիալական անհավասարությանը կամ գենդերային խտրականությանը:

Տվյալ քաղաքականության իրագործման համար Բանկը պետք է.

- \* Ունենա բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ, որն ապահովում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի բացահայտումը և գնահատումը նախագծի մշակման ամենավաղ փուլում,
- \* Խուսափի, նվազեցնի կամ սահմանափակի բացասական բնապահպանական, սոցիալական և կլիմայական ազդեցությունները և բարձրացնի իր նախագծերի բնապահպանական և/կամ սոցիալական օգուտները,
- \* Աջակցի կենսաբազմազանության պահպանմանն ու պաշտպանությանը և բնական ռեսուրսների կայուն կառավարմանը,
- \* Խուսափի համայնքների կենսապայմանների, կենսապահովման և հողի սեփականության վրա բացասական ազդեցություններից,
- \* Ապահովի աշխատավայրում իր աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունը և պահանջի իր Հաճախորդներից միջոցներ ձեռնարկել իրենց աշխատողների աշխատավայրում առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու համար,
- \* Դատապարտի հարկադիր աշխատանքը և երեխաների աշխատանքը, արգելի խտրականությունը, արգելի և պայքարի հալածանքի դեմ, պաշտպանի միավորումների ազատությունը և աշխատողների կոլեկտիվ բանակցությունների իրավունքը,
- \* Պահպանի բնապահպանական, սոցիալական և առողջապահական բոլոր համապատասխան պահանջները, ինչպես նաև հողերի օտարման ոլորտում ՀՀ իրավական ակտերը,
- \* Վերահսկի այդ մեղմացնող միջոցառումների կարգավիճակն իրականացման ընթացքում և դրանից հետո, և
- \* Ապահովի համարժեք հնարավորություններ բոլոր շահագրգիռ կողմերին իրազեկված մասնակցության համար Բանկի կողմից աջակցվող նախագծերի մշակմանը և իրականացմանը:

### 4. Բնապահպանական և սոցիալական չափանիշներ

Բանկի աջակցությամբ իրականացվող բոլոր նախագծերը նախագծվելու և իրականացվելու են բնապահպանական և սոցիալական չափանիշներին համապատասխան: Կիրառվեն Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) նորմատիվային ութ չափանիշ: Նորմատիվային չափանիշների ամբողջական փաթեթը ներկայացված է Հավելված II-ում: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր նախագծի նկատմամբ կիրառելի հատուկ չափանիշը կարող է տարբերվել՝ կախված նախագծի բնույթից և

<sup>10</sup> Հարկադիր աշխատանք օտար կանգնե հավասար կառավարող ցանկացած աշխատանք կամ ծառայություն է, որը վերջում է տեղի ունի կամ պատժի պատճառով տան:

<sup>11</sup> Երեխաների փոփոխվող աշխատանք նշանակում է երեխաների ցրտակծություն, որը տեղեկատվա շահագրգիռ է կամ կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխանի կրթությունը կամ փաստակար լինել երեխանի առողջությանը կամ ֆիզիկական, սեռավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը:

շրջանակից: Այլ կերպ ասած, կախված նախագծի բնույթից և չափից, Նորմատիվային բոլոր չափանիշները կարող են կիրառելի լինել ոչ բոլոր նախագծերի համար:

Բացի այդ, Բանկից պահանջվում է պահպանել բնապահպանական և սոցիալական երաշխիքների ոլորտում ՀՀ բոլոր իրավական ակտերը: Այսպիսով, Հավելված II-ը ներառում է և՛ այն Նորմատիվային չափանիշների լայն նկարագրությունը, որոնց Բանկը պետք է համապատասխանի, և՛ ազգային օրենքների և կանոնակարգերի համառոտ ամփոփումը, որոնք կիրառվում են այդ չափանիշներից յուրաքանչյուրի համար:

Որոշ դեպքերում, երբ Բանկը միջոցներ է ստանում Միջազգային ֆինանսական կառույցներից կամ ներդրումային հիմնադրամներից, հաճախորդի նախագծերի առաջարկների նկատմամբ կիրառվելու են Միջազգային ֆինանսական կառույցների բնապահպանական և սոցիալական չափանիշները: Դա երբեմն ենթադրում է Բանկի և Միջազգային ֆինանսական կառույցների միջև քննարկումներ առ այն, թե ում չափանիշներն են կիրառվելու:

## **5. Բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրություն**

### **5.1. Ներածություն**

Ինչպես նշված է Բաժին 2.2.1-ում, երբ Բանկը նշում է, որ նախագիծը չի ներառում բացառված տեսակի գործունեություն, հնարավոր հաճախորդը տեղեկացվում է, որ Բանկը (կամ նրա պատասխանատուն) կիրականացնի բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրություն (ԲՍՀՈՒ)՝ որպես գնահատման գործընթացի մաս: ԲՍՀՈՒ-ի համար պատասխանատվությունը բաշխված է Բանկի և Հաճախորդի միջև և շարադրված է ժամանակագրական կարգով Բաժին 6-ում:

Բանկի համալիր ուսումնասիրությունը հիմնված կլինի Հաճախորդի կողմից իրականացվելիք հետևյալ աշխատանքների վրա.

- (i) առաջարկվող նախագծի գնահատում՝ պոտենցիալ բնապահպանական և/կամ սոցիալական ռիսկի մակարդակը որոշելու համար,
- (ii) Բնապահպանական և սոցիալական գործողությունների Ծրագրի (ԲՍԳԾ) պատրաստում՝ անհրաժեշտության դեպքում,
- (iii) ցանկացած համապատասխան բնապահպանական/սոցիալական գնահատման և կառավարման պլանավորման կատարում՝ համաձայն ԲՍԳԾ-ի,
- (iv) նշում առ այն, թե ինչպես է նա մտադիր խորհրդակցել շահագրգիռ կողմերի հետ նախագծի մշակման ընթացքում,
- (v) նախագիծ-ծրագրի մակարդակով բողոքների բավարարման համապատասխան մեխանիզմի մշակում, և
- (vi) նշում առ այն, թե ինչպես է իրականացվելու մոնիթորինգը և հաշվետվությունների ներկայացումը՝ բնապահպանական և սոցիալական հետևանքների մեղմացման պարտավորությունների կատարման մասին:

### **5.2. Գնահատում՝**

Բոլոր առաջարկվող նախագծերը պետք է իրականացնեն ծրագրի ԲՍԿ-ի գնահատում՝ որոշելու համապատասխան ռիսկերի մակարդակները/կարգերը: Եթե հաճախորդի համար վերջին մեկ տարվա ընթացքում իրականացվել է ԲՍԿ գնահատում և առկա չէ տեղեկատվություն, որ ԲՍ ռիսկերի էական փոփոխություններ են տեղի ունեցել, ապա նոր գնահատում չի պահանջվում և ռիսկի արդեն գնահատված մակարդակը պահպանվում է:

Հաճախորդը պատասխանատու է գնահատման իրականացման համար: Գնահատման նպատակն է.

- \* հասկանալ, թե արդյոք նախագիծը կարող է հանգեցնել որևէ բացասական սոցիալական և բնապահպանական ազդեցությունների,

- \* խուսափել, նվազեցնել կամ սահմանափակել շրջակա միջավայրի աղտոտումը և բնապահպանական վնասը, ներառյալ կլիմայի համար վնասակար արտանետումները և աղտոտումը,
- \* որոշել բնապահպանական և սոցիալական ռիսկի մակարդակը, այսինքն՝ ցածր, չափավոր կամ բարձր, և
- \* որոշել ռիսկերի հայտնաբերման դեպքում, թե ինչպես պետք է վերացնել կամ կառավարել այդ ռիսկերը:

Նախագծի ԲՍԿ գնահատումը բաղկացած է երկու հստակ փուլից. (i) ԲՍԿ գնահատման նախնական հարցաթերթիկի լրացում և (ii) ԲՍԿ գնահատման ամբողջական/խորացված հարցաթերթիկի լրացում: Երկու հարցաթերթերն էլ ներկայացված են Հավելված III-ում, համապատասխանաբար՝ Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում:

Նախնական հարցաթերթիկի նպատակն է որոշել՝ արդյոք նախագիծը ենթակա է դիտարկման, թե չէ դարկման: Նախնական գնահատումը ծառայում է՝ որոշելու, թե արդյոք նախագիծն ազատված է հետագա գնահատումից(տես բաժին 5.3), թե այն ներառում է որևէ գործունեություն, որը բացառված է, ինչպես նշված է բաժին 2.3-ում: Եթե նախագիծն ազատված կամ բացառված չէ, ապա նախագծի համար հարկավոր է լրացնել ԲՍԿ գնահատման ամբողջական/ խորացված հարցաթերթիկ(այսինքն՝ Աղյուսակ 2, Հավելված III): Այս ամբողջական/խորացված գնահատման արդյունքում որոշվում է նախագծի ընդհանուր ռիսկի կարգը, որի ընթացքը ներկայացված է Հավելված III-ում:

Այն պահից, երբ հաճախորդը լրացնում է ԲՍԿ ամբողջական/խորացված հարցաթերթիկը, Բանկը որոշում է առաջարկվող գործունեության ընդհանուր ռիսկի կարգը: Նախագծերին տրվելու է երեք հնարավոր ռիսկերի կարգերից մեկը.

- **Բարձր ռիսկի նախագծեր (Կարգ A).** Բնապահպանական և/կամ սոցիալական էական անբարենպաստ ազդեցություններ առաջացնելու պոտենցիալ ունեցող նախագծեր, որոնք անդառնալի են, բազմազան և աննախադեպ: Այս ազդեցությունները կարող են ազդել նախագծի տարածքը գերազանցող ավելի մեծ տարածքի վրա, կարող են կապված լինել զգայուն ստացողների՝ բնակչության կամ էկոլոգիայես կարևոր տարածքների հետ, կարող են լրջորեն ազդել ստացողների առողջության և կյանքի որակի վրա, կարող են լինել երկարաժամկետ, կարող են լինել անդառնալի և դրանց առաջացման հավանականությունը մեծ է<sup>12</sup>:
- **Միջին ռիսկի նախագծեր (Կարգ B).** Բնապահպանական և սոցիալական պոտենցիալ ազդեցություն ունեցող նախագծեր, որոնք ավելի քիչ բացասական են և ավելի քիչ թվով, քան բարձր ռիսկի նախագծերը: Սովորաբար, այս ազդեցությունները հատուկ են տեղանքին, դրանց մեծությունը կարող է որոշվել ողջամիտ որոշակիության աստիճանով, դրանցից միայն մի մասն են անդառնալի, և մեղմացնող միջոցառումները կարող են հեշտությամբ նախագծվել և իրականացվել՝ այդ խնդիրները հաջողությամբ բավարարելու համար: Ակնկալվում է, որ միջին ռիսկի նախագծերը կունենան փոքր կամ սահմանափակ ազդեցություն փոքրամասնությունների վերաբնակեցման վրա:
- **Ցածր ռիսկի նախագծեր (Կարգ C).** Նախագծեր, որոնք, ամենայն հավանականությամբ, կունենան նվազագույն ազդեցություն կամ կլինեն առանց շրջակա միջավայրի կամ սոցիալական ազդեցությունների, և/կամ եթե որպես նախագծի գործունեության մաս արդեն մշակել են մեղմացման միջոցներ, որոնք համարժեքորեն արձագանքում են ռիսկերին: Ոչ կամավոր վերաբնակեցում կամ փոքրամասնությունների վրա ազդեցություն չի ակնկալվում: Ցածր ռիսկի նախագծերի համար լրացուցիչ գնահատում չի պահանջվում:

### 5.3. Ազատում

Այն նախագծերը, որոնք բաղկացած են բացառապես հետևյալ գործառույթներից կամ գործողություններից որևէ մեկից, ազատված են սույն ԲՍԿ գնահատման պահանջներից.

<sup>12</sup> Նախ է եղել, որ որոշ բազմակողմ կամ երկկողմ բնութագրի չեն ստացվի իրենց միջոցների օգտագործմանը: Ա կարգի նախագծերի համար, օրինակ՝ դա վերաբերում է Անխալան գաղափարի շրջանին:

- Տեղեկատվական արտադրանքի պատրաստում և տարածում,
- Կարողությունների զարգացման միջոցառումների կազմակերպում, ինչպիսիք են՝ սեմինարները և դասընթացները,
- Գործընկերների՝ ազգային և միջազգային քաղաքականությունների գործընթացներին մասնակցելու կարողությունների հզորացում,
- Գործընկերությունների համակարգում և ցանցի կառավարում, և/կամ
- Համաշխարհային/տարածաշրջանային/ազգային գործունեություն (օրինակ՝ գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների կառավարումը, միջկառավարական գործընթացները) առանց տեղական մակարդակի գործունեության:

*Ազատման չափանիշները կիրառվում են միայն այն դեպքում, եթե դրանք կազմում են նախագծի ամբողջ շրջանակը:* Նախնական գնահատման ընթացքում կորոշվի, թե արդյոք նախագիծը ազատված է ԲՍԿՀ ամբողջական/խորացված գնահատման պահանջներից, ինչպես նշված է սույն ԲՍԿՀ-ի III Հավելվածի Աղյուսակ 2-ում:

#### **5.4. Համալիր ուսումնասիրության հետագա աշխատանքները, որոնք պահանջվում են A և B կարգերի նախագծերի համար**

5.4.1. Բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլան. Ռիսկի կարգի նշանակումը որոշում է պատշաճ ուսումնասիրության վրա հետագա աշխատանքի անհրաժեշտությունը: C կարգի գործարքները, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք նախատեսված են հատուկ ռիսկերի փորձարկման համար (ռիսկերը պետք է բացահայտվեն գնահատման գործընթացում, ինչպես նաև առևտրի ֆինանսավորման գործարքների վերանայման ընթացքում), չեն պահանջում երաշխիքների լրացուցիչ ստուգում՝ կիրառելի ստանդարտների/պահանջների կատարման դեպքում: Տես նաև Հավելված 1.Առևտրի ֆինանսավորման հատուկ դրույթներ՝ առևտրի ֆինանսավորման գործարքների Բ և Ս-ի գնահատումների համար:

B կամ A կարգի նախագծերի համար Բանկը հաճախորդից պահանջում է կառավարել կամ մեղմացնել վերանայման ընթացքում հայտնաբերված հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, որպեսզի Բանկը շարունակի գործարքը: Հաճախորդից պահանջվում է մշակել պլան՝ գնահատմամբ բացահայտված ազդեցությունները բավարարելու համար՝ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր (ԲՍԳԾ) տեսքով: ԲՍԳԾ-ի օրինակը բերված է Հավելված IV-ում: **ԲՍԳԾ-ի պատրաստման համար պատասխանատու է Հաճախորդը:**

Եթե պահանջվում է ԲՍԳԾ, ապա պահանջները պետք է ներառվեն որպես պարտադիր պայմաններ Բանկի և Հաճախորդի միջև իրավական համաձայնագրում: Դա օգնում է Բանկին նվազեցնել իր ազդեցությունը Բնապահպանական և սոցիալական ռիսկերի նկատմամբ, որոնք կապված են Հաճախորդի գործունեության հետ գործարքի ողջ ընթացքում, և անհամապատասխանության դեպքում Բանկին տրամադրում է իրավական պաշտպանություն:

5.4.2. Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան. A կարգի նախագծերի արդյունքները ԲՍԳԾ ձևանմուշը (տես՝ Հավելված IV) թվարկում է գնահատման ընթացքում հայտնաբերված բնապահպանական և սոցիալական ռիսկերը: Եթե գնահատման արդյունքը բարձր ռիսկային կարգի է (Կարգ A), ապա ԲՍԳԾ-ում նշված կլինեն որոշակի գնահատման ուսումնասիրություններ և կառավարման պլաններ, որոնց կատարումը կարող է անհրաժեշտ լինել հաճախորդի կողմից:

Հաշվի առնելով, որ A Կարգի նախագծերն ունեն զգալի բացասական բնապահպանական և/կամ սոցիալական ազդեցություններ առաջացնելու ներուժ, սովորաբար պահանջվում է շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության ամբողջական/խորացված գնահատում (ԲՍԱԳ-ի ամբողջական կառուցվածքի վերաբերյալ ուղեցույցը բերված է Հավելված V-ում): Բացի այդ, նախագծի համար անհրաժեշտ կլինի մշակել և իրականացնել Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան (ԲՍԳՊ), որը կօգտագործվի բնապահպանական և սոցիալական մեղմացման միջոցառումները կառավարելու, վերահսկելու և արձագանքելու համար: ԲՍԳՊ ձևանմուշը ներկայացված է Հավելված VI-ում:

Ցանկացած նախագիծ, որը գնահատվում է որպես մուտքի սահմանափակմանը հանգեցնելու ներուժ ունեցող, կարող է պահանջել Տեխնոլոգիական սխեմայի մշակում: Տեխնոլոգիական սխեմայի նպատակն է ստեղծել մի գործընթաց, որով հնարավոր ազդեցության ենթակա համայնքների անդամները կարող են մասնակցել նախագծի բաղադրիչ մասերի մշակմանը: Ուղեցույցը և Տեխնոլոգիական սխեմայի օրինակելի ձևը ներկայացված են Հավելված VII-ում:

5.4.3. Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան. B կարգի նախագծերի արդյունքները Շատ հավանական է, որ Միջազգային ֆինանսական կառույցներից ներգրավված ռեսուրսներով ֆինանսավորվող Բանկի նախագծերի զգալի մասը կրեն միջին ռիսկայնություն (կարգ B):

Հաճախորդի կողմից պատրաստված ԲՍԿՊ-ում նշված կլինեն նման դեպքերում պահանջվող գործողությունները: Ինչպես A կարգի նախագծերի դեպքում, կարող են պահանջվել ռիսկերի գնահատման որոշ ուսումնասիրություններ և/կամ կառավարման պլանների մշակում, սակայն դրանք կլինեն ավելի փոքր և սահմանափակ: Գնահատման մակարդակը պետք է համաչափ լինի գնահատման ընթացքում հայտնաբերված ռիսկի մակարդակին: Հաշվի առնելով, որ հիմնական նպատակը բնապահպանական և սոցիալական դրական արդյունքներին հասնելն է, B կարգի նախագծերի համար ակնկալվող բնապահպանական և սոցիալական ռիսկերը կլինեն սահմանափակ և ժամանակավոր:

Բ կարգի նախագծերը կարող են պահանջել Նպատակային բնապահպանական և սոցիալական գնահատում: Նման գնահատման ձևանմուշը/Հավելվածը ներկայացված է Հավելված VIII-ում: Բնապահպանական և սոցիալական գնահատումից հետո կարող է անհրաժեշտ լինել մշակել և իրականացնել Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (ԲՍԿՊ), որը կիրառվելու է բնապահպանական և սոցիալական մեղմացման միջոցառումները կառավարելու, վերահսկելու և արձագանքելու համար: ԲՍԿՊ-ի համար առաջարկվող կառուցվածքը ներկայացված է Հավելված VI-ում:

Ամբողջական ԲՍԱԳ-ն կարող է պահանջվել որոշ դեպքերում, երբ դա նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ: Նման դեպքերում Հաճախորդը պետք է համապատասխանի օրենքի պահանջներին և ներկայացնի ամբողջական ԲՍԱԳ:

5.4.4. Բանկի կողմից բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրության մասին հաշվետվության ավարտում

A և B կարգերի նախագծերի նկատմամբ Հաճախորդի աշխատանքի ավարտից հետո ՎԴ աշխատակիցը պատրաստում է բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրության ամփոփ հաշվետվություն՝ որպես Բանկի որոշումների կայացման ընթացակարգի մաս (մանրամասն՝ Բաժին 6-ում): ԲՍՀՈՒ հաշվետվության ձևանմուշը ներկայացված է Հավելված IX-ում:

## 5.5. Բողոքների բավարարում

Բողոքը սահմանվում է որպես հարց, մտահոգություն, խնդիր կամ պահանջ (ենթադրյալ կամ փաստացի), որը անհատը կամ համայնքային խումբը ցանկանում է, որ Հաճախորդը քննարկի և բավարարի: Օրինակները ներառում են կոնկրետ բողոքներ նախագծի կողմից պատճառված ազդեցության, վնասների կամ վնասի վերաբերյալ, ինչպես նաև բողոքներ շինարարության կամ շահագործման ընթացքում նախագծի գործողությունների, կամ ենթադրյալ միջադեպերի կամ ազդեցությունների վերաբերյալ:

Հաճախորդները պատասխանատու են նախագծի մակարդակով բողոքների բավարարման մեխանիզմների (ԲԲՄ) մշակման և իրականացման համար: ԲԲՄ-ների նպատակն է Բանկի կողմից աջակցվող նախագծից տուժած մարդկանց տրամադրել մատչելի, թափանցիկ, արդար և արդյունավետ գործընթաց՝ ցանկացած նման նախագծի կողմից պատճառված բնապահպանական կամ սոցիալական վնասների վերաբերյալ նրանց բողոքները ստանալու և դրանց բավարարման համար:

Շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցառումները կենտրոնանալու են խնդիրների ակտիվ բացահայտման և բավարարման վրա՝ նախքան դրանք բողոք դառնալը: Այնուամենայնիվ, երբ բողոքները ներկայացվում են, դրանք պետք է բավարարվեն հետևողական և վերահսկելի եղանակով: Բողոքների մեխանիզմի նպատակը հանրության, աշխատողների կողմից և այլ շահագրգիռ կողմերից նախագծի հետ կապված բողոքների բավարարման համար պաշտոնական գործընթացի ներդրումն է (նույնականացում,

հետևում և փոխհատուցում): Բողոքների մեխանիզմը պետք է ապահովի շահագրգիռ կողմերի մեկնաբանությունների, առաջարկությունների և առարկությունների հավաքագրումն ու քննարկումը: Բողոքների մեխանիզմը պետք է լինի թափանցիկ, գեներալիստիկ զգայուն, մշակութային առումով զգայուն և հասանելի շահագրգիռ կողմերի բոլոր խմբերի համար՝ առանց ծախսերի կամ հատուցման:

Բողոքների բավարարման մեխանիզմը պետք է լինի.

- \* Սիստեմատիկ. Պետք է քննարկվեն նախագծի հետ կապված բողոքների բոլոր ձևերը,
- \* Թափանցիկ. Շահագրգիռ կողմերը պետք է տեղեկացված լինեն բողոքների բավարարման մեխանիզմի առկայության մասին, իսկ բողոքները պետք է փաստաթղթավորվեն և գրանցվեն,
- \* Պատշաճ. Նախագծի մասշտաբին համապատասխան, տեղական պայմաններին հարմարեցված և մշակութային առումով ընդունելի, և
- \* Հանգեցնի ուղղիչ գործողությունների. Բողոքներին պետք է համապատասխան պատասխան տրվի, իսկ պատասխանները պետք է փաստաթղթավորվեն: Բողոքների ժամանակին բավարարումը կենսական նշանակություն ունի նախագծի հաջող իրականացումն ապահովելու համար:

Բողոքների բավարարումը հարկավոր է փնտրել հնարավորինս ցածր մակարդակով՝ հետևելով ստորև նկարագրված երեք փուլից բաղկացած գործընթացին.

- (a) Բողոք ներկայացնողները նախ պետք է քննարկեն խնդիրը նախագծի ղեկավարության/կիրառելի մարմնի հետ՝ փորձելով բավարարել այն համատեղ,
- (b) Եթե դա արդյունքների չի բերում, հարցը պետք է փոխանցվի Բանկի տնօրենին, որը պետք է հանդես գա որպես չեզոք միջնորդ՝ իրավիճակը կարգավորելու համար.

Եթե այս երկու ուղիներից ոչ մեկը արդյունավետ չէ՝ իրավիճակը շտկելու համար, պաշտոնական բողոք պետք է ներկայացվի անկախ արբիտրին կամ համապատասխան պետական մարմիններին:

Բողոքների բավարարման մեխանիզմի համար պատասխանատու անձ պետք է նշանակվի նախագծի մակարդակով: Հաճախ դա կարող է լինել Նախագծի իրականացման պատասխանատուն, ով գործընկերներին և կապալառուներին կտեղեկացնի բողոքի ներկայացման մեխանիզմի ընթացակարգերի մասին, կհավաքի բողոքների ձևերը, կմուտքագրի դրանք բողոքների գրանցամատյանում և կնպաստի նախագծի հաշվետվություններին: Բողոքների գրանցամատյանը պետք է ներառի առնվազն հետևյալ կարգերը.

- \* Կոնտակտային անձի անունը և կոնտակտային տվյալները (բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջվում է անանուն մնալ),
- \* Բողոքի ամսաթիվը և նկարագրությունը,
- \* Բողոքին պատասխանը / ձեռնարկված ուղղիչ գործողությունը/ները:

Որպեսզի բողոքարկման մեխանիզմն արդյունավետ և հասանելի լինի, հաճախորդը պետք է տեղեկացնի ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերին մեխանիզմի առկայության մասին: Որպես իդեալական տարբերակ, դա պետք է կատարվի ծրագրի նախագծման փուլում, բայց ոչ ուշ, քան նախագծի իրականացման առաջին եռամսյակում: Շահագրգիռ կողմերը պետք է իմանան, թե երբ խնդիրները կարող են բավարարվել՝ օգտագործելով բողոքների բավարարման մեխանիզմը, եռաստիճան գործընթացը, կոնտակտային տվյալները և բողոքների ներկայացման մեխանիզմը: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի մշակութային տեսակետից ընդունելի ձևով, որը հասանելի կլինի բոլոր կապակցված խմբերի համար, այդ թվում նաև՝ կանանց, փոքրամասնություններին և խոցելի խմբերի համար: Այն կարող է փոխանցվել բանավոր (խորհրդատվական հանդիպումների կամ լրատվամիջոցների միջոցով) և գրավոր:

## **5.6. Մոնիթորինգ և հաշվետվություններ**

**Հաճախորդները անմիջականորեն պատասխանատու են համապատասխան նախագծերի՝ բնապահպանական և սոցիալական համապատասխանության ամենօրյա մոնիթորինգի և շահագրգիռ կողմերի ներգրավվածության համար:**

Մոնիթորինգի նպատակն է ապահովել Հաճախորդների և Բանկի հետ պայմանագրով նախատեսված բնապահպանական և սոցիալական պայմանների պահպանումը, ազգային և տեղական օրենսդրության պահանջների մշտական կատարումը և Բանկին տարեկան հաշվետվությունների տրամադրումը վարկատուներին և այլ շահագրգիռ կողմերին:

Այն դեպքերում, երբ մշակվել է ԲՍԿՊ, առաջարկվող մեղմացման միջոցառումների մոնիթորինգ, հաշվետվությունները կատարվելու են՝ կիրառելով ԲՍԿՊ ձևանմուշը (հավելված VI):

Հաճախորդը պարտավոր է պայմանավորվել կապալառուների կամ նախագիծն իրականացնողների հետ, թե ինչպես է իրականացվելու մոնիթորինգը: Կապալառուները պետք է անմիջապես զեկուցեն արտակարգ իրավիճակների մասին: Հաճախորդը պատասխանատու է սեփական մոնիթորինգի և հաշվետվությունների համար (ներառյալ արտակարգ իրավիճակների դեպքում), ինչպես նաև Բանկին իրազեկելու բնապահպանական և սոցիալական կատարողականի մասին: «Արտակարգ իրավիճակները» ներառում են. բարձր աստիճանի չնախատեսված բնապահպանական/սոցիալական ազդեցություններ, չնախատեսված վթարներ, անընդունելի աշխատանքային պայմաններ (ներառյալԳԲ/ՍՇՁՍՈ), երեխաների աշխատանք, հարկադիր աշխատանք); ազգային օրենսդրության պահանջների չկատարում:


## **6. ԲՍԿՀ պահանջների ինտեգրում Ռիսկերի կառավարման գործող ընթացակարգերին**

Ինչպես նշվել է 2.2 և 5.1 բաժիններում, նախագծի իրականացման ընթացքում գնահատման և ռիսկերի գնահատման, այնուհետև բնապահպանական և սոցիալական կառավարման պատասխանատվությունը հիմնականում դրված է պատվիրատուների վրա: Այնուամենայնիվ, Բանկն ունենալու է համալիր ուսումնասիրության իր սեփական ընթացակարգերը, որոնք պետք է պահպանի, ուստի ԲՍԿՀ պահանջների արդյունավետ ինտեգրումը Բանկի վարկային ռիսկի կառավարման գործընթացներին էական նշանակություն ունի: Գծապատկեր 2-ը ցույց է տալիս, թե ինչպես են սովորաբար վարվում վարկային հայտերը, և Գծապատկեր 3-ը ցույց է տալիս, թե ինչպես պետք է ինտեգրվեն Բաժին 5-ում սահմանված համալիր ուսումնասիրության պահանջները Բանկի առկա ռիսկերի գնահատման գործընթացում:



**Գծապատկեր 2. Վարկի գնահատման ավանդական գործընթաց**

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատում
Նախնական գնահատման հարցաթերթիկի ներկայացում (Բաժին 5.2 և Հավելված III)
Ամբողջական/խորացված գնահատման հարցաթերթիկի ներկայացում (Բաժիններ 5.2, Հավելված III, և 5.4)
Նախագծի դասակարգում (Բաժիններ 5.2-5.5)
Կառավարման միջոցների/պլանների մշակում, այդ թվում նաև ԲևՍ գնահատում (Բաժիններ 5.4 և 5.5)
Բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրություն Բանկի կողմից՝ A և B կարգերի համար (Բաժին 5.4.4)
Բ և Ս պահանջների ներառում ֆինանսական պայմանագրերի/ իրավաբանական փաստաթղթերի մեջ (Բաժին 5.7)
Բ և Ս պահանջների մոնիթորինգ (Բաժին 5.7)



**Գծապատկեր 3. Վարկի գնահատման գործընթացի մեջ ԲՍԿ պահանջների ինտեգրում** Բանկը պետք է վերանայի վարկավորման գործընթացը կարգավորող համապատասխան ներքին իրավական ակտերը՝ համաձայն Աղյուսակ 1-ի ԲՍԿ պահանջները ներառելու համար:



**Աղյուսակ 1. ԲՍԿ պահանջների ներառումը ներքին հաստատման ընթացակարգերի մեջ**

<b>Ֆինանսավորման դիմում</b>	
<p><i>Նախնական գնահատման հարցաթերթիկի ներկայացում (Բաժին 5.2)</i></p> <p><i>(Նախնական գնահատման հարցաթերթիկը ներկայացված է Հավելված III-ում)</i></p>	<p>Ինչպես նշվել էր 5.2 բաժնում, գնահատման հարցաթերթիկի նպատակն է որոշել, թե արդյոք նախագիծը ենթակա է ազատման թե բացառման: Առաջարկվում է, որ նախնական գնահատման անցկացվի վարկավորման գործընթացի վաղ փուլում՝ վարկի համար դիմումի փուլում:</p> <p>Այդ նպատակով հաճախորդը լրացնում է Հավելված III-ի Աղյուսակ 1-ի հարցաթերթիկը: ՎԴ աշխատակիցը հարցազրույց է անցկացնում հաճախորդի հետ՝ որոշելու, թե արդյոք նախագիծը պատկանում է Բանկի ազատման կամ բացառությունների ցանկին: Եթե նախագիծը պատկանում է հետևյալին.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բանկի բացառումների ցանկին, ապա ՎԴ աշխատակիցը մերժում է վարկի հայտը: Հակառակ դեպքում նա անցնում է բիզնեսի վերլուծության փուլին:</li> <li>• Ազատումների ցանկին, ապա ՎԴ աշխատակից անցնում է բիզնեսի վերլուծության փուլին՝ առանց հետագա գնահատման պահանջների:</li> </ul>
<b>Բիզնեսի վերլուծություն</b>	
<p><i>Ամբողջական/խորացված գնահատման հարցաթերթիկի ներկայացում (Բաժին 5.2 և Բաժին 5.4)</i></p> <p><i>(Ամբողջական /խորացված գնահատման հարցաթերթիկը ներկայացված է Հավելված III-ում)</i></p>	<p>Ամբողջական/խորացված գնահատման հարցաթերթիկը պահանջվում է բոլոր այն նախագծերի համար, որոնք ներառված չեն Բանկի ազատումների կամ բացառումների ցանկում: Ամբողջական/խորացված գնահատման նպատակն է որոշել նախագծի ընդհանուր ռիսկի կարգը, համաձայն սույն ԲՍԿ Բաժին 5.2: Ամբողջական գնահատումն իրականացվում է Հաճախորդի կողմից, այնուհետև գնահատվում է ՎԴ աշխատակցի կողմից համալիր ուսումնասիրության ընթացքում:</p> <p>Ակնկալվում է, որ Բանկի համալիր ուսումնասիրությունը տեղի կունենա բիզնեսի վերլուծությունից հետո, երբ ՎԴ աշխատակիցն ավելի մանրամասն պատկերացում կունենա առաջարկվող նախագծի վերաբերյալ:</p> <p>Այդ նպատակով, տեղանքի այցելությունից և բիզնես վերլուծությունից հետո, ՎԴ աշխատակիցը վերանայում է հաճախորդի կողմից պատրաստված ռիսկերի դասակարգումը: ՎԴ աշխատակիցը պետք է աշխատի հաճախորդի հետ՝ ձեռք բերելու ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է բնապահպանական և սոցիալական ռիսկերի վերլուծության համար:</p> <p>Նախագծի կարգից կախված՝ ՎԴ աշխատակիցը որոշում է կառավարման անհրաժեշտ միջոցառումները/պլանները՝ համաձայն 5.4 բաժնի:</p>
<b>Որոշման կայացում</b>	
<p><i>Նախագծի դասակարգում (Բաժին 5.2)</i></p> <p><i>(ԲՍՀՈՒ համար ձևանմուշ՝ ներկայացված Հավելված IX-ում)</i></p>	<p>Որոշում կայացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի հետ մեկտեղ ՎԴ աշխատակիցը Վարկային կոմիտեին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Նախնական գնահատման հարցաթերթիկ,</li> <li>• Ամբողջական/խորացված գնահատման հարցաթերթիկ՝ անհրաժեշտ կառավարման միջոցառումների/պլանների վերաբերյալ առաջարկություններով, և</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրության (ԲԱՀՈԻ) հաշվետվություն՝ համաձայն 5.4.4 բաժնի:</li> </ul> <p>Վարկային կոմիտեն պատասխանատու է ապահովելու, որ բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատումն իրականացվի սույն ԲԱՀ-ի 5.2-5.4 բաժիններին համապատասխան: Ելնելով վերը նշված ներկայացված փաստաթղթերից և ՎԴ աշխատակցի կողմից ներկայացված նախագծի բնույթից՝ Վարկային կոմիտեն որոշում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հաստատել/մերժել վարկը,</li> <li>• Անցկացնել նախագծի վերջնական դասակարգումը,</li> <li>• Սահմանել անհրաժեշտ կառավարման միջոցառումները/պլանները, և</li> <li>• Սահմանել ԲԱՍ մոնիթորինգի պահանջները:</li> </ul>
--	--

**Ֆինանսական փաստաթղթերը և բաշխումը**

<p><i>Կառավարման միջոցների/ պլանների մշակում (Բաժին 5.4)</i></p> <p><i>Անցկացնել լրացուցիչ ԲԱՍ գնահատումներ (Բաժին 5.4)</i></p> <p><i>Բնապահպանական և սոցիալական համալիր ուսումնասիրություն Բանկի կողմից՝ A և B կարգերի համար (Բաժին 5.4.4)</i></p> <p><i>(Համապատասխան կառավարման միջոցների/ պլանների համար նմուշները ներկայացված են V, VI, VII և VIII Հավելվածներում)</i></p>	<p>Վարկային կոմիտեի կողմից վարկի հայտի հաստատումից հետո աշխատակիցը տեղեկացնում է Հաճախորդին որոշման մասին հաստատման դեպքում, պահանջում է մշակել համապատասխան կառավարման միջոցառումներ/պլաններ՝ համաձայն ԲԱՀ-ի Բաժին 5.4: աշխատակիցը պետք է Հաճախորդին տրամադրի բոլոր համապատասխան ձևանմուշները և ձևաթղթերը և, հնարավորության դեպքում, տրամադրի աջակցություն և խորհրդատվություն այդ փաստաթղթերի մշակման հարցում:</p> <p>Բաշխման համար անհրաժեշտ փաթեթի հետ միասին ՎԴ աշխատակիցը Բանկի գրասենյակ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Նախնական գնահատման հարցաթերթիկը</li> <li>• Ամբողջական/խորացված գնահատման հարցաթերթիկը՝ պահանջարկային կառավարման միջոցառումների/ պլանների վերաբերյալ առաջարկություններով,</li> <li>• Մշակված կառավարման միջոցառումներ/պլաններ, և</li> <li>• ԲԱՀՈ հաշվետվությունը:</li> </ul>
---	---

**ԲԱՍ պահանջների Մոնիթորինգ**

<p><i>Բ և Ս ազդեցությունների մոնիթորինգ (Հավելված 5.6)</i></p>	<p>Բնապահպանական և սոցիալական հարցերի պատշաճ մոնիթորինգը հանդիսանում է կանոնավոր վարկային գործընթացի մի մասը:</p> <p>Հաճախորդը պատասխանատու է ԲԱՀ-ի իրականացման և Բանկին կանոնավոր հաշվետվություն ներկայացնելու համար: Վարկային կոմիտեն պատասխանատու է որոշելու, թե ինչպես, երբ և որքան հաճախ է իրականացվելու մոնիթորինգը: Վարկային կոմիտեի որոշման հիման վրա ՎԴ աշխատակիցը պատասխանատու է ԲԱՍ ազդեցության կանոնավոր մոնիթորինգի համար:</p> <p>Ինչպես նշված է 5.6 բաժնում, այն դեպքերում, երբ մշակվել է ԲԱԿՊ, առաջարկվող մեղմացման միջոցառումների մոնիթորինգը և հաշվետվությունները կկատարվեն համաձայն ԲԱԿՊ ձևանմուշի (Հավելված VI):</p>
--	---

**7. ԲՍԿ պաշտոնատար/պատասխանատու անձանց պարտականությունները**

Աղյուսակ 2-ը նկարագրում է ԲՍԿ կիրառման հետ կապված պատասխանատվությունները և պարտականությունները

**Աղյուսակ 2. Բանկի ԲՍԿ պաշտոնատար/պատասխանատու անձանց պարտականությունները**

Անձնակազմի անդամի անունը/պաշտոնը	Պարտականությունը
ԲՍԿ պատասխանատու	<p>Առաջարկում է սահմանել համապատասխան պայմաններ ԲևՍ քաղաքականությանը: Բացի այդ, սահմանվում են հետևյալ գործառույթները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Սահմանում է Բանկի ԲևՍ պահանջները և պայմանները հաճախորդների համար</li> <li>- Չբավարարված բնապահպանական և սոցիալական խնդիրների կամ գործարքի հետ կապված անհամապատասխանությունների դեպքում, որոնք չեն կարող լուծվել առաջարկում է հետագա գործողություններ, որոնք կնվազեցնեն ԲևՍ ռիսկի մակարդակը, ներառյալ դատական գործողություններ հաճախորդի դեմ՝ օրենքով սահմանված դեպքերում :</li> </ul>
ԲՍԿ պատասխանատու	<ul style="list-style-type: none"> <li>- Ապահովում է ԲՍԿ-ի ամբողջական իրականացումը</li> <li>- Ապահովում է, որ բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատումները կատարվեն համաձայն սույն ԲՍԿ-ի պահանջների</li> <li>- Համակարգում է ԲևՍ համալիր ուսումնասիրության ընդհանուր գործընթացը</li> <li>- Վարում է ԲՍԿ-ի հետ կապված պահանջների գրանցամատյանը էլեկտրոնային տարբերակով Բանկում առկա համակարգով</li> <li>- Վերահսկում է ԲՍԿ-ով պահանջվող փաստաթղթերը, ձևաթղթերը և գրանցումները</li> </ul>
ՎԴ աշխատակից	<ul style="list-style-type: none"> <li>- Գնահատում է է վարկի հայտը բացառված/ազատված գործունեության ցանկի հետ,</li> <li>- Անհրաժեշտության դեպքում հաճախորդից լրացուցիչ տեղեկատվություն է պահանջում ԲևՍ ղրորտում ռիսկի գնահատումն ավարտելու համար,</li> <li>- Վարկային կոմիտեին է ներկայացնում որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը,</li> <li>- Հաճախորդին տեղեկացնում է Վարկային կոմիտեի որոշման մասին և հաստատված վարկերի դեպքում պահանջում է հաստատված կառավարման միջոցառումներ/պլաններ,</li> <li>- Հաճախորդին տրամադրում է բոլոր հասանելի ձևանմուշները և ձևերը անհրաժեշտ կառավարման միջոցառումների/ պլանների համար,</li> <li>- Հնարավորության դեպքում տրամադրում է համապատասխան աջակցություն և խորհրդատվություն վերը նշված փաստաթղթերի մշակման գործում,</li> <li>- Վարկ տրամադրելու համար անհրաժեշտ ԲևՍ-ին վերաբերող փաստաթղթերը ներկայացնում է փաստաթղթերի մշակման ստորաբաժանմանը</li> <li>- Իրականացնում է ԲևՍ ազդեցության մոնիթորինգ</li> </ul>
Իրավաբան	<ul style="list-style-type: none"> <li>- Ապահովում է, որ համապատասխան ԲևՍ պահանջները ներառված լինեն ֆինանսավորման պայմանագրերի/համաձայնագրերի փաստաթղթերում</li> </ul>
Վարկային կոմիտե	<ul style="list-style-type: none"> <li>- Վերջնական որոշում է կայացնում վարկի և ԲՍ ռիսկերի գնահատականի հաստատման վերաբերյալ,</li> <li>- Սահմանում է հետագա արտահերթ ուսումնասիրությունների, մոնիթորինգների ժամկետները՝ մասամբ հիմնվելով ԲևՍ-ի գործընթացի ԲՍՍԳ-ի վրա:</li> </ul>

**8. Հավելված I. Հատուկ պայմաններ առևտրի ֆինանսավորման համար**

Բանկը հասկանում է, որ բնապահպանական և սոցիալական ռիսկերն առկա են մատակարարման բարձր շրջաններում, որոնք ֆինանսավորվում են առևտրի ֆինանսավորման ապրանքների միջոցով և գիտակցում

է անբարենպաստ ազդեցությունները բացահայտելու և կառավարելու համակարգերի ամրապնդման և զարգացման անհրաժեշտությունը:

Սույն ԲՍԿ-ի համատեքստում «առևտրի ֆինանսավորման գործառնություններ» նշանակում են Բանկի և Հաճախորդի միջև առևտրի ֆինանսավորման ծառայություններ մատուցելու մասին համաձայնագիրը:

Բանկի առևտրի ֆինանսավորման ապրանքները բաղկացած են մինչև արտահանման և հետարտահանման գործարքներից և ակրեդիտիվներից:

Առևտրի ֆինանսավորման բոլոր դրույթները ենթակա են սույն ԲՍԿ-ի պահանջներին: Առևտրի ֆինանսավորման գնահատման գործընթացը իրականացվելու է դիմումի փուլում: Ի լրումն ԲՍԿ նախնական գնահատման և ամբողջական/խորացված ԲՍԿ հարցաթերթիկի, առևտրի ֆինանսավորման գործարքները նույնպես կուսումնասիրվեն հետևյալ Բ և Ս հատուկ ռիսկերի համար:

**Աղյուսակ A1.Առևտրի ֆինանսավորման ոլորտում ԲևՍ գնահատման հարցաթերթիկ**

<b>Հավելված I. Հատուկ պայմաններ առևտրի ֆինանսավորման համար</b>			
<b>№</b>	<b>Հարց</b>	<b>Հավանական պատասխանը</b>	<b>Մեկնաբանություններ (կիրառելի լինելու դեպքում)</b>
1	Արդյո՞ք հաճախորդի, հիմնական մատակարարների և վերջնական շահառուների անունների սքրինինգը ի հայտ է բերել որևէ բացասական տեղեկատվություն ՋԼՄ-ներում	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/>	
2	Արդյո՞ք համապատասխան երկիր-ապրանք համակցությունը նշված է ԱՄՆ աշխատանքի նախարարության՝ Երեխաների աշխատանքի և հարկադիր աշխատանքի արդյունքում արտադրված ապրանքների ցանկում	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/>	
3	Արդյո՞ք ապրանքը հանդիսանում է կամ պարունակում է արմավենու յուղ, արդյո՞ք ապահովվել է RSPO (The Roundtable on Sustainable Palm Oil) վկայականը	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Կ/չէ <input type="checkbox"/>	
4	Արդյո՞ք ապրանքը հանդիսանում է կամ պարունակում է փայտե արտադրանք, արդյո՞ք ապահովվել է FSC(The <i>Forest Stewardship Council</i> ) վկայականը	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Կ/չէ <input type="checkbox"/>	

Հարկ է նշել, որ Միջազգային ֆինանսական կառույցների մեծ մասը չի տրամադրի ֆինանսավորում առևտրի գործարքների համար, եթե այդ ծրագրերը դասակարգվեն որպես Ա կարգ: Բ կարգի գործառնություններն այն գործառնություններն են, որոնք բացահայտված են որպես պոտենցիալ

բնապահպանական կամ սոցիալական ռիսկեր, որոնք պահանջում են հետագա ԲՍՀՈՒ: Տիպիկ նախագծերի և դրանց ռիսկերի դասակարգման օրինակները կարելի է գտնել ՄՖԿ-ի և ՎՋԵԲ-ի կայքերի հետևյալ հղումներում:

ՄՖԿ՝ <https://firstforsustainability.org/risk-management/risk-categorization-table/>

ՎՋԵԲ՝ <https://www.ebrd.com/downloads/about/sustainability/ebird-risk-english.pdf>

## 9. Հավելված II. Բնապահպանական և սոցիալական չափանիշներ

### 9.1. Կատարողականի չափանիշ 1. Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում

#### Ա. Կատարողականի չափանիշ(ԿԶ)

Սույն ԿԶ-ն ընդգծում է բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատման կարևորությունը ծրագրի կյանքի ցիկլի ընթացքում: ԿԶ-ի հիմնական նպատակներն են.

(i) ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բացահայտում և գնահատում, (ii) մեղմացնող միջոցառումների հիերարխիայի ընդունում՝ կանխատեսելու, կանխելու (կամ նվազագույնի հասցնելու) և փոխհատուցելու ռիսկերն ու ազդեցությունները աշխատողների, ազդակիր համայնքների և շրջակա միջավայրի վրա, (iii) ապահովել ազդակիր համայնքների բողոքներին և այլ շահագրգիռ կողմերի արտաքին հաղորդակցությանը համապատասխան պատասխաններ, և (iv) միջոցներ տրամադրել ազդակիր համայնքների հետ համագործակցելու և ապահովելու համապատասխան բնապահպանական և սոցիալական տեղեկատվության բացահայտումը<sup>13</sup>:

Սույն ԿԶ-ին համապատասխանելու համար բանկը պետք է ընդունի և պահպանի ինստիտուցիոնալ շրջանակ, որը բավարար է սույն փաստաթղթում ԲՍԿ-ը պատշաճ կերպով իրականացնելու համար: Սույն ԿԶ-ը նաև պահանջում է, որ Բանկը պատշաճ ուսումնասիրություն իրականացնի՝ բացահայտելու և գնահատելու առաջարկվող նախագծերի հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները: Ստորև բերված ԿԶ-երի 2-8- ի կիրառելիությունը կհաստատվի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցության նույնականացման գործընթացի ընթացքում որը նկարագրված է և շարադրված է ԲՍԿ-ի 5-րդ բաժնում:

#### Բ. Ազգային նորմեր

Ի լրումն վերը նշված Կատարողականի չափանիշի և սույն փաստաթղթում նշված պատշաճ ուսումնասիրության գործընթացների, պետք է պահպանվեն ազդեցության գնահատման վերաբերյալ հետևյալ ազգային նորմերին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը (ՇՄԱԳ օրենք)** ընդհանուր շրջանակ է տրամադրում Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համար: ՇՄԱԳ մասին օրենքը կառավարելու իրավասու մարմինը Շրջակա միջավայրի պահպանության նախարարությունն է, սակայն փորձաքննության հետ կապված որոշ գործառույթներ իրականացնում է հատուկ փորձագիտական կենտրոնը («ՇՄԱԳ փորձագիտական կենտրոն») պետական ոչ առևտրային կազմակերպություն):

ՇՄԱԳ օրենքի 14-րդ հոդվածում նշված ցանկացած տեսակի գործունեության համար նախագծային փաստաթղթերը ենթակա են ՇՄԱԳ և փորձաքննության: Օրենքը պարունակում է նման գործողությունների սպառիչ ցանկ, որոնք ստորաբաժանվում են «Ա», «Բ» և «Շ» կարգերի՝ կախված շրջակա միջավայրի վրա ազդեցության ծավալից՝ ավելի նշանակալից մինչև պակաս նշանակալի: Բացի այդ, ՇՄԱԳ և փորձաքննություն է պահանջվում նաև 4-րդ հոդվածում չնշված գործողությունների համար, որոնք կիրականացվեն պահպանվող տարածքներում, անտառներում, պատմական հուշարձաններում և հանրային կանաչ տարածքներում: Նման դեպքում գործունեությունը համարվում է Բ կարգին պատկանող: ՇՄԱԳ-ի և փորձագիտական վերանայման ընթացակարգը կարգավորվում է ՇՄԱԳ օրենքի 4-րդ գլխով:

<sup>13</sup> Կազմակերպության համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կազմակերպություն (ՄՖԿ) Կատարման ստանդարտ 1 և ուղեցույց 2: Հասանելի է հետևյալ հասցեով՝ [https://www.ifc.org/wps/wcm/connect/topics\\_ext\\_content/ifc\\_external\\_corporate\\_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards.pdf](https://www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards.pdf)

Ընթացակարգային ասպեկտների ավելի մանրամասն կարգավորումը նախատեսված է ՀՀ կառավարության 09.04.2015թ. 399-Ն որոշմամբ:

## 9.2. Կատարողականի չափանիշ 2. Աշխատանք և աշխատանքային պայմաններ

### Ա. Կատարողականի չափանիշ

Սույն ԿՁ-ն ընդունում է, որ տնտեսական աճը պետք է ուղեկցվի աշխատողների հիմնարար իրավունքների պաշտպանությամբ<sup>14</sup>:

Սույն ԿՁ-ի հիմնական նպատակներն են. (i) խթանել արդար վերաբերմունքը, խտրականության բացառումը և աշխատողների համար հավասար հնարավորությունները, (ii) աշխատողների և ղեկավարության միջև հարաբերությունների հաստատում և բարելավում, (iii) զբաղվածության և աշխատանքային օրենսդրությանը համապատասխանության խթանում, (iv) աշխատողների (ներառյալ աշխատողների խոցելի խմբերի) պաշտպանությունը, (v) անվտանգ և առողջ աշխատանքային պայմանների և աշխատողների առողջության խթանում, և (vi) հարկադիր աշխատանքի կիրառման կանխումը<sup>15</sup>:

Սույն ԿՁ-ն վերաբերում է ուղղակիորեն ներգրավված աշխատողներին, երրորդ անձանց միջոցով ներգրավված աշխատողներին և կազմակերպության հիմնական մատակարարներին: Սույն պահանջները կարելի է բաժանել հետևյալ կարգերի.

- Աշխատանքային պայմանների և աշխատակիցների հետ հարաբերությունների կառավարում
  - Մարդկային ռեսուրսների քաղաքականություն
  - Աշխատանքային պայմանները և աշխատանքի ժամկետները
  - Աշխատավորների կազմակերպություններ
  - Խտրականության բացակայություն և հավասար հնարավորություններ
  - Աշխատանքից ազատում
  - Բողոքների բավարարման մեխանիզմ
- Աշխատուժի պաշտպանություն
  - Երեխաների աշխատանք
  - Հարկադիր աշխատանք
- Աշխատանքի առողջություն և անվտանգություն
- Երրորդ անձանց կողմից ներգրավված աշխատողներ
- Մատակարարման շղթա

### Բ. Ազգային նորմեր

Զբաղվածության բոլոր ասպեկտները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Այն պարունակում է խտրականության լայն արգելք, պահանջում է հավասար վարձատրություն հավասար աշխատանքի համար, խիստ սահմանափակում է անչափահաս աշխատողների աշխատանքը և պահանջում է ապահով և առողջ աշխատանքային պայմաններ և աշխատողների առողջություն: Աշխատանքային օրենսգրքից բացի, Առողջապահության նախարարի մի քանի դրույթներ սահմանում են հատուկ պահանջներ՝ կապված աշխատողների առողջության վրա ազդող գործոնների հետ: Առավել ընդհանուր պահանջները ամրագրված են սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերը 2.2-002-05 հաստատելու մասին Առողջապահության նախարարի թիվ 756-Ն հրամանագրով: Ավելի շատ տեխնիկական և արդյունաբերական պահանջներ սահմանված են սանիտարական կանոններով և նորմերով N 2.2.5-004-10, հիգիենայի նորմերով N 2.2.4-008-06, N 2.2.4-009-0, N 2.2.4-005-06, N 2.2 .4-006-06, N 2.2.4-007-06, N 2.2.4-010-06 և N 2.2.5-005-12:

Հարկադիր աշխատանքը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի, քրեական հանցագործություն է:

## 9.3. Կատարողականի չափանիշ 3. Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում

### Ա. Կատարողականի չափանիշ

<sup>14</sup> Լրացուցիչ ուղեկցիկ համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կատարման ստանդարտի 2-րդ կետը, Հասանելի է հետևյալ հասցեով՝ [https://www.ics.org/wps/wcm/connect/0202c\\_ext\\_content/external\\_corporate\\_site/sustainability-at-ics/policies-standards/performance-standards/ps2](https://www.ics.org/wps/wcm/connect/0202c_ext_content/external_corporate_site/sustainability-at-ics/policies-standards/performance-standards/ps2)

<sup>15</sup> Լրացուցիչ ուղեկցիկ համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կատարման ստանդարտի 2-րդ կետը, Հասանելի է հետևյալ հասցեով՝ [https://www.ics.org/wps/wcm/connect/0202c\\_ext\\_content/external\\_corporate\\_site/sustainability-at-ics/policies-standards/performance-standards/ps2](https://www.ics.org/wps/wcm/connect/0202c_ext_content/external_corporate_site/sustainability-at-ics/policies-standards/performance-standards/ps2)

Սույն ԿԶ-ն ընդունում է, որ աճող տնտեսական ակտիվությունը կարող է հանգեցնել օդի, ջրի և հողի աղտոտվածության ավելացմանը և սակավ ռեսուրսների սպառմանը, ինչը կարող է սպառնալ մարդկանց և շրջակա միջավայրին<sup>16</sup>: Սույն ԿԶ-ի հիմնական նպատակներն են. (i) խուսափել կամ նվազագույնի հասցնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները՝ կանխելով կամ նվազագույնի հասցնելով ծրագրի գործողությունների արդյունքում աղտոտումը, (ii) նպաստել ռեսուրսների, այդ թվում՝ էներգիայի և ջրի ավելի կայուն օգտագործմանը, և (iii) նվազեցնել ծրագրի հետ կապված ՋԳ(Ջերմոցային գազեր) արտանետումները<sup>17</sup>:

Սույն ԿԶ-ի տարբեր պահանջները կարելի է դասակարգել հետևյալ կարգով.

- Ռեսուրսների արդյունավետություն
  - Ջերմոցային գազեր
  - Ջրի սպառում
- Աղտոտման կանխարգելում
  - Թափոններ
  - Վտանգավոր նյութերի կառավարում
  - Թունաքիմիկատների օգտագործում և կառավարում

## Բ. Ազգային նորմեր

«Մթնոլորտային օդի պաշտպանության մասին» օրենքը շրջանակ է ապահովում՝ օդն ավելորդ աղտոտումից պաշտպանելու համար: Օրենքը պահանջում է, որ յուրաքանչյուր աղտոտող օբյեկտի համար սահմանվեն աղտոտման առավելագույն թույլատրելի ծավալներ և աղտոտման առավելագույն թույլատրելի մակարդակներ<sup>18</sup>: Աղտոտիչներ արտանետողները պետք է թույլտվություն ստանան և միջոցներ ձեռնարկեն աղտոտվածությունը նվազեցնելու համար<sup>19</sup>:

**Ջրային օրենսգիրքը** նախատեսում է ջրային ռեսուրսների կառավարման և օգտագործման շրջանակ, ներառյալ ջրօգտագործման թույլտվությունների համակարգը: Ջրային օրենսգիրքը նախատեսում է նաև ջրի որակի չափանիշների սահմանում՝ ներառյալ աղտոտվածության թույլատրելի մակարդակները և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումները<sup>20</sup>:

**Հողային օրենսգիրքը** նախատեսում է հողային ռեսուրսների կառավարման և օգտագործման շրջանակ, ներառյալ հողերի աղտոտումից պաշտպանությունը: **Հայաստանի կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի 124-Ն որոշմամբ** սահմանվում են հողի աղտոտումից պաշտպանության ընդհանուր պահանջները, վնասակար աղտոտիչների ցանկը և հողերի աղտոտվածության մակարդակի գնահատման ընթացակարգը:

**Թափոնների մասին օրենքը** նախատեսում է թափոնների կառավարման շրջանակը: Օրենքը նախատեսում է, որ մարդկանց առողջությունը և շրջակա միջավայրը պաշտպանելու և թափոնների կառավարմամբ զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար թափոնների քանակը նվազեցնելու նպատակով սահմանվում են թափոնների հեռացման սահմանափակումներ: Թափոնների հեռացման սահմանաչափերը սահմանվում են թափոնների կառավարման ոլորտում լիազորված պետական մարմինների կողմից՝ շրջակա միջավայրի վրա թույլատրելի ազդեցության չափորոշիչներին համապատասխան<sup>21</sup>:

Վտանգավոր թափոններ արտադրողները պարտավոր են նաև կազմել և հաստատել վտանգավոր թափոնների անձնագրեր՝ **ՀՀ կառավարության 19.01.2006թ. 47-Ն որոշմամբ սահմանված կարգով**:

## 9.4. Կատարողականի չափանիշ 4. Համայնքի առողջությունը և անվտանգությունը

### Ա. Կատարողականի չափանիշ

Սույն ԿԶ-ն ընդունում է հնարավորությունը, որ ծրագրի գործողությունները կարող են հանգեցնել հանրության՝ ռիսկերին և ազդեցություններին ենթարկվելը, և անդրադառնում է համապատասխան

<sup>16</sup> Լրացուցիչ ուղեցույցի համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կրթություն (IFAI) Կատարման չափանիշ 3 և ուղեցույց, Հասանելի է հետևյալ հասցեով՝ [https://www.iaef.org/learn/connect/topics\\_ext\\_content/external\\_corporate\\_site/sustainability-at-iaef/policies-standards/performance-standards.pdf](https://www.iaef.org/learn/connect/topics_ext_content/external_corporate_site/sustainability-at-iaef/policies-standards/performance-standards.pdf)

<sup>17</sup> Լրացուցիչ ուղեցույցի համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կրթություն (IFAI) Կատարման չափանիշ 3 և ուղեցույց, Հասանելի է հետևյալ հասցեով՝ [https://www.iaef.org/learn/connect/topics\\_ext\\_content/external\\_corporate\\_site/sustainability-at-iaef/policies-standards/performance-standards.pdf](https://www.iaef.org/learn/connect/topics_ext_content/external_corporate_site/sustainability-at-iaef/policies-standards/performance-standards.pdf)

<sup>18</sup> Հոդված 12

<sup>19</sup> Հոդված 15

<sup>20</sup> Հոդված 66

<sup>21</sup> Հոդված 12

կազմակերպության պատասխանատվությանը՝ կանխելու կամ նվազագույնի հասցնելու ռիսկերը և հանրային առողջության վրա ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ ծրագրի հետ կապված գործողություններից<sup>22</sup>:

Սույն ԿԶ-ի հիմնական նպատակներն են. (i) կանխատեսել և խուսափել առողջության և անվտանգության անբարենպաստ ազդեցություններից ազդակիր համայնքների վրա ծրագրի իրականացման ընթացքում ինչպես նորմալ, այնպես էլ անսովոր հանգամանքներում, և, (ii) ապահովել, որ անձնակազմը և գույքը պաշտպանված են համաձայն մարդու իրավունքների համապատասխան սկզբունքների և այնպես, որ խուսափեն կամ նվազագույնի հասցնեն ազդակիր համայնքների ռիսկերը<sup>23</sup>:

Սույն ԿԶ-ի պահանջները կարելի է բաժանել հետևյալ կատեգորիաների.

- Ենթակառուցվածքների և սարքավորումների նախագծում և անվտանգություն
- Վտանգավոր նյութերի կառավարում և անվտանգություն
- Էկոհամակարգային ծառայություններ
- Բնակչության ենթակայությունը հիվանդություններին
- Պատրաստվածություն և արձագանքում արտակարգ իրավիճակներին

## Բ. Ազգային նորմեր

Կկիրառվեն ազգային և ԵԱՏՄ մակարդակներում ենթակառուցվածքների և սարքավորումների նախագծման և անվտանգության պահանջները, ներառյալ «**Տեխնիկական կարգավորման մասին» օրենքի**, ինչպես նաև ազգային և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջները:

«**Վտանգավոր արդյունաբերական օբյեկտների մասին» օրենքը** նախատեսում է անվտանգության հատուկ ընթացակարգեր և վտանգավոր արդյունաբերական օբյեկտների կանոնավոր փորձաքննություն:

«**Հրդեհային անվտանգության մասին» օրենքը** սահմանում է հրդեհային անվտանգության կարգավորման ռեժիմ, ներառյալ հրդեհային անվտանգության ոլորտում կազմակերպությունների տարբեր պարտավորությունները:

«**Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքը** կարգավորում է արտակարգ իրավիճակներում կիրառվող միջոցառումներն ու ընթացակարգերը, ներառյալ կազմակերպությունների որոշակի լիազորություններ՝ ապահովելու իրենց աշխատողների անվտանգությունը և օգնություն ցուցաբերել արտակարգ իրավիճակների ծառայություններին:

«**Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքը** սահմանում է երկրաշարժերի դեպքում անվտանգության միջոցներ, այդ թվում՝ կազմակերպությունների պարտավորությունները՝ ապահովելու իրենց անձնակազմի և սեյսմիկ վտանգ կազմող սեյսմիկ պաշտպանության կառույցների անվտանգությունը<sup>24</sup>:

«**Պաշտպանության մասին» օրենքը** սահմանում է ռազմական անվտանգության միջոցառումներն ու համակարգերը, այդ թվում՝ կազմակերպությունների պարտավորությունները՝ զորակոչին օգնություն ցուցաբերելու և այլ անհրաժեշտ պաշտպանական միջոցառումներ իրականացնելու համար<sup>25</sup>:

## 9.5. Կատարողականի չափանիշ 5. Հողի ձեռքբերում և հարկադիր վերաբնակեցում

### Ա. Կատարողականի չափանիշ

Սույն ԿԶ-ն ընդունում է պոտենցիալ բացասական ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ ծրագրի հետ կապված հողի օտարման և հողօգտագործման սահմանափակումների հետևանքով: Հարկադիր վերաբնակեցումը սույն ԿԶ-ի նպատակներով վերաբերում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ տնտեսական տեղաշարժին՝ ծրագրի հետ կապված հողերի ձեռքբերման և/կամ հողօգտագործման սահմանափակումների հետևանքով<sup>26</sup>:

Սույն ԿԶ-ի հիմնական նպատակներն են՝ (i) խուսափել (կամ նվազագույնի հասցնել) տեղաշարժը՝ ուսումնասիրելով ծրագրի այլընտրանքները, (ii) խուսափել հարկադիր տեղահանումից, (iii) կանխատեսել և

<sup>22</sup> Կառուցվածքային ստանդարտներ և՛ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFSI) Կատարման չափանիշ 4 և ուղեկցող Հասանելի և հնարավոր հասցեով՝ [https://www.ifc.org/wps/wcm/connect/topics\\_ext\\_content/ifc\\_external\\_corporate\\_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards/ps4](https://www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards/ps4)

<sup>23</sup> Հոդված 16

<sup>24</sup> Հոդված 16

<sup>25</sup> Հոդված 13

<sup>26</sup> Կառուցվածքային ստանդարտներ և՛ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFSI) Կատարման չափանիշ 5 և ուղեկցող Հասանելի և հնարավոր հասցեով՝ [https://www.ifc.org/wps/wcm/connect/topics\\_ext\\_content/ifc\\_external\\_corporate\\_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards/ps5](https://www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards/ps5)



խուսափել (կամ նվազագույնի հասցնել) անբարենպաստ սոցիալական և տնտեսական ազդեցությունները հողի ձեռքբերման կամ հողօգտագործման սահմանափակումների միջոցով՝ (ա) ապահովելով ակտիվների կորստի փոխհատուցում փոխարինման արժեքով և (բ) ապահովելով, որ վերաբնակեցման գործողություններն իրականացվում են համապատասխան բացահայտումներով և խորհրդատվություններով; (iv) բարելավել կամ վերականգնել տեղահանված անձանց կենսամիջոցները և կենսամակարդակը, և (v) բարելավել ֆիզիկապես տեղահանված անձանց կենսապայմանները՝ ապահովելով ապահով սեփականությանը համապատասխան բնակության վայր<sup>27</sup>:

Սույն ԿԶ-ի տարբեր պահանջները կարելի է բաժանել հետևյալ կարգերի.

- Ընդհանուր.
  - Ծրագրի նախագծում
  - Փոխհատուցում և նպաստներ տեղահանված անձանց համար
  - Համայնքի ներգրավվածություն
  - Բողոքների բավարարման մեխանիզմ
  - Վերաբնակեցման և ապրուստի միջոցների վերականգնման միջոցառումների պլանավորում և իրականացում
- Տեղահանում.
  - Ֆիզիկական տեղահանում
  - Տնտեսական տեղահանում
- Մասնավոր հատվածի պարտականությունները պետականորեն կառավարվող վերաբնակեցման հարցում

## Բ. Ազգային նորմեր

Հարկավոր է հաշվի առնել և պահպանել հետևյալ ազգային նորմերը, որոնք վերաբերում են հողերի օտարմանը և հարկադիր վերաբնակեցմանը:

**ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ կետում** սահմանվում է, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն (առգրավումը) իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ<sup>28</sup>:

**«Հասարակության առաջնահերթ շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքը** հիմք է տալիս գույքի և սեփականության նկատմամբ ունեցած շահերի օրինական հարկադիր ձեռքբերման (հանման) համար: Օրենքը սահմանում է գերակա հանրային շահի որոշման կարգը, գերակա հանրային շահի ապահովման նպատակով սեփականության օտարման կարգը, օտարված գույքի դիմաց փոխհատուցում տրամադրելու կարգը:

Հնարավոր է օտարում հօգուտ պետության, քաղաքապետարանի կամ կազմակերպության: Օտարման մասին որոշումը կայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը և պետք է համապատասխանի օրենքի 7-րդ հոդվածի պահանջներին, այդ թվում՝ հաշվի առնելով գերակա հանրային շահերը: Մինչև նման որոշում կայացնելը, շահագրգիռ ձեռք բերողի պահանջով կառավարությունը կարող է, բայց պարտավոր չէ, որոշում կայացնել գույքի նախնական փորձաքննության մասին: Այս երկու որոշումներն էլ կարող են վիճարկվել դատարանում:

Համաձայն Օրենքի 11-րդ հոդվածի՝ ձեռք բերողը պարտավոր է գույքի համար վճարել արդարացի փոխհատուցում, որը սահմանվում է որպես շուկայական արժեք՝ գումարած 15%:

## 9.6. Կատարողականի չափանիշ 6. Կենսաբազմազանության պահպանում և կայուն կառավարում

### Ա. Կատարողականի չափանիշ

Սույն ԿԶ-ն ընդունում է, որ կենսաբազմազանության պաշտպանությունն ու պահպանումը, էկոհամակարգային ծառայությունների պահպանումը և բնական ռեսուրսների կառավարումը հիմնարար են կայուն զարգացման համար<sup>29</sup>: Սույն ԿԶ-ի հիմնական նպատակներն են. (i) կենսաբազմազանության

<sup>27</sup> Կրթության ոլորտից համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կատարման չափանիշ 5 և ուղեկց. Հասանելի է նեխոլոլ կայքում [https://www.ifc.org/wpr/wprcontent/topics\\_ext\\_content/c\\_esmtool\\_corporate\\_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards/pa5](https://www.ifc.org/wpr/wprcontent/topics_ext_content/c_esmtool_corporate_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards/pa5)

<sup>28</sup> Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, հոդված 60 կետ 5

<sup>29</sup> Կրթության ոլորտից համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կատարման չափանիշ 6 և ուղեկց. Հասանելի է նեխոլոլ կայքում

պաշտպանությունը և պահպանումը, (ii) էկոհամակարգային ծառայությունների օգուտների պահպանում, և (iii) խթանել կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարումը՝ ներդնելով պրակտիկաներ, որոնք միավորում են պահպանման կարիքները և զարգացման առաջնահերթությունները<sup>30</sup>:

Սույն Կ2-ի տարբեր պահանջները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- Կենսաբազմազանության պաշտպանություն և պահպանում
  - Փոփոխված բնակավայր
  - Բնական միջավայր
  - Կրիտիկական միջավայր
  - Իրավաբանորեն պահպանվող և միջազգայնորեն ճանաչված տարածքներ
  - Ինվազիվ(օտարածին) օտարերկրյա տեսակներ
- Էկոհամակարգային ծառայությունների կառավարում
- Կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում
- Մատակարարման շղթա

## Բ. Ազգային նորմեր

Հարկավոր է պահպանել հետևյալ ազգային նորմերը.

**ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը** սահմանում է, որ Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Բացի այդ, այն նախատեսում է Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Բնության հատուկ պահպանվող բնական տարածքների մասին» օրենքը** սահմանում է բնության հատուկ պահպանվող տարածքների, այդ թվում՝ ազգային զբոսայգիների, արգելոցների և արգելավայրերի իրավական ռեժիմը: Օրենքը նաև սահմանում է հատուկ իրավական ռեժիմ յուրաքանչյուր տարածքում և դրանց կոնկրետ գոտիներում գործունեության համար:

**«Կենդանական աշխարհի մասին» օրենքը** սահմանում է վայրի բնության պահպանության և պահպանման իրավական ռեժիմ: Պաշտպանության նպատակներից է կենսաբազմազանության ապահովումը<sup>31</sup>: Օրենքը նախատեսում է «Կենդանիների Կարմիր գրքի» ստեղծում, որտեղ թվարկված են հազվագյուտ և անհետացող տեսակները՝ դրանց պահպանությունն ապահովելու նպատակով<sup>32</sup>: ՀՀ կառավարության 29.06.2010 թվականի 71-Ն որոշմամբ ստեղծվել է «Կենդանիների Կարմիր գիրքը»:

**«Բուսական աշխարհի մասին» օրենքը** սահմանում է բուսական աշխարհի պահպանության և պահպանման իրավական ռեժիմ: Այն պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք հաստատվել են կենդանական աշխարհի համար, այդ թվում նաև՝ «Բույսերի Կարմիր գրքի» ստեղծումը, որտեղ թվարկվում են հազվագյուտ և անհետացող տեսակները՝ դրանց պահպանումն ապահովելու համար<sup>33</sup>: Հայաստանի կառավարության 29.06.2010թ. 72-Ն որոշումը պարունակում է «Բույսերի Կարմիր գիրքը»:

## 9.7. Կատարողականի չափանիշ 7. Բնիկ ժողովուրդներ

### Ա. Կատարողականի չափանիշ

Սույն Կ2-ն ընդունում է, որ բնիկ ժողովուրդները հաճախ բնակչության ամենախոցելի և մարզինալացված/անհետացող խմբերն են: Հաճախ նրանց տնտեսական, սոցիալական և իրավական կարգավիճակը խոչընդոտներ է ստեղծում, որոնք սահմանափակում են հողի, բնական և մշակութային ռեսուրսների նկատմամբ իրենց իրավունքները և շահերը պաշտպանելու նրանց հնարավորությունը<sup>34</sup>:

<sup>30</sup> [https://www.ic.org/wps/wcm/connect/topics\\_ext\\_content/external\\_corporate\\_site/sustainability-at-ic/policies-standards/performance-standards.pdf](https://www.ic.org/wps/wcm/connect/topics_ext_content/external_corporate_site/sustainability-at-ic/policies-standards/performance-standards.pdf)  
<sup>31</sup> [https://www.ic.org/wps/wcm/connect/topics\\_ext\\_content/external\\_corporate\\_site/sustainability-at-ic/policies-standards/performance-standards.pdf](https://www.ic.org/wps/wcm/connect/topics_ext_content/external_corporate_site/sustainability-at-ic/policies-standards/performance-standards.pdf)  
<sup>32</sup> Հոդված 16  
<sup>33</sup> Հոդված 18  
<sup>34</sup> Հոդված 17  
<sup>35</sup> [https://www.ic.org/wps/wcm/connect/topics\\_ext\\_content/external\\_corporate\\_site/sustainability-at-ic/policies-standards/performance-standards.pdf](https://www.ic.org/wps/wcm/connect/topics_ext_content/external_corporate_site/sustainability-at-ic/policies-standards/performance-standards.pdf)

Սույն ԿԶ-ի հիմնական նպատակներն են. (i) ապահովել, որ զարգացումը նպաստի բնիկ ժողովուրդների մարդու իրավունքների, արժանապատվության, ճգնաժամների, մշակույթների և ապրուստի միջոցների լիակատար հարգմանը, (ii) կանխատեսել և խուսափել ծրագրի ազդեցությունները բնիկ համայնքների վրա կամ նվազագույնի հասցնել և/կամ փոխհատուցել այդպիսի ազդեցությունները, (iii) մշակութային առումով համապատասխան ձևով խթանել կայուն զարգացման օգուտներն ու հնարավորությունները բնիկ ժողովուրդների համար, (iv) հաստատել և պահպանել շարունակական հարաբերություններ ծրագրի ազդեցության տակ գտնվող բնիկ ժողովուրդների հետ տեղեկացված խորհրդակցությունների և մասնակցության վերաբերյալ, (v) համապատասխան հանգամանքներում ապահովել տուժած բնիկ համայնքների ազատ, նախնական և տեղեկացված համաձայնությունը (ԱՆՏՀ), և (vi) հարգել և պահպանել բնիկ ժողովուրդների մշակույթը, գիտելիքները և արելակերպը<sup>35</sup>:

Սույն ԿԶ-ի տարբեր պահանջները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- Ընդհանուր.
  - Անբարենպաստ ազդեցություններից խուսափելը
  - Մասնակցություն և համաձայնություն
- Անվճար, նախնական և տեղեկացված համաձայնություն (ԱՆՏՀ) պահանջող հանգամանքները.
  - Ազդեցություն ավանդական սեփականության կամ սովորական օգտագործման հողերի և բնական ռեսուրսների վրա
  - Բնիկ ժողովուրդների տեղահանում հողերից և բնական ռեսուրսներից, որոնք գտնվում են ավանդական սեփականության կամ սովորական օգտագործման ներքո
  - Կարևոր մշակութային ժառանգություն
- Մեղմացման և զարգացման առավելությունները
- Մասնավոր հատվածի պատասխանատվությունը այն դեպքերում, երբ կառավարությունը պատասխանատու է բնիկ ժողովուրդների հիմնախնդիրների կառավարման համար:

## Բ. Ազգային նորմեր

Բնիկ ժողովուրդների նկատմամբ կիրառվում են հետևյալ ազգային նորմերը.

**Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածն** արգելում է խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությունը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: 28-րդ հոդվածը սահմանում է, որ բոլորը հավասար են օրենքի առջև: Սույն նորմերը հստակորեն չեն ներառում բնիկ ժողովուրդների կարգավիճակը՝ որպես խտրականության արգելված հիմք, սակայն տեսականորեն ընդգրկում են բնիկ ժողովուրդներին՝ որպես արգելված հիմքեր ներառելով ռասան, ծագման վայրը, սոցիալական դասը և մշակույթը:

Այլ օրենքները պարունակում են հակախտրական դրույթներ, որոնք կիրառելի են կոնկրետ ոլորտների համար: Դրանք ներառում են **Աշխատանքային օրենսգրքի** 3.1-րդ հոդվածը, որն արգելում է խտրականությունը աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային հարաբերություններում, ներառյալ խտրականությունը ռասայի, մաշկի գույնի, էթնիկական պատկանելության, գենետիկական հատկանիշների, ազգային փոքրամասնության պատկանելության և այլնի հիման վրա, որն ընդգրկում է բնիկ ժողովուրդներին:

## 9.8. Կատարողականի չափանիշ 8. Մշակութային ժառանգություն

### Ա. Կատարողականի չափանիշ

Սույն ԿԶ-ն ընդունում է մշակութային ժառանգության կարևորությունը և նպատակ ունի ապահովել մշակութային ժառանգության պաշտպանությունը կազմակերպությունների կողմից իրենց ծրագրի գործունեության ընթացքում<sup>36</sup>: Սույն ԿԶ-ի հիմնական նպատակներն են. (i) պաշտպանել մշակութային ժառանգությունը ծրագրի գործունեության անբարենպաստ ազդեցություններից և աջակցել դրա

<sup>35</sup> Էկոլոգիայի ուղեցույցի համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կատարման ստանդի 7 և ուղեցույց 2-ում ներկայացված հասցեով [https://www.ifc.org/webcontent/connect/pcia\\_ext\\_content/c\\_external\\_corporate\\_sustainability-ai-rc/policies-standards/performance-standards/ps7](https://www.ifc.org/webcontent/connect/pcia_ext_content/c_external_corporate_sustainability-ai-rc/policies-standards/performance-standards/ps7)

<sup>36</sup> Էկոլոգիայի ուղեցույցի համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կատարման ստանդի 8 և ուղեցույց 2-ում ներկայացված հասցեով [https://www.ifc.org/webcontent/connect/pcia\\_ext\\_content/c\\_external\\_corporate\\_sustainability-ai-rc/policies-standards/performance-standards/ps8](https://www.ifc.org/webcontent/connect/pcia_ext_content/c_external_corporate_sustainability-ai-rc/policies-standards/performance-standards/ps8)

պահպանմանը, և (ii) խթանել մշակութային ժառանգության օգտագործումից օգուտների արդար բաշխմանը<sup>37</sup>:

Սույն ԿԶ-ի պահանջները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- Ծրագրի մշակման և իրականացման ընթացքում մշակութային ժառանգության պահպանությունը.
  - Հանկարծակի գյուտի ընթացակարգեր
  - Խորհրդատվություն
  - Հանրային հասանելիություն
  - Վերարտադրվող մշակութային ժառանգության հեռացում
  - Անվերարտադրվող մշակութային ժառանգության հեռացում
  - Կրիտիկական մշակութային ժառանգություն
- Ծրագրի շրջանակներում մշակութային ժառանգության օգտագործումը:

**Բ. Ազգային նորմեր**

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքը սահմանում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության իրավական հիմքերը: Օրենքով թվարկված հուշարձանները դասակարգվում են հանրապետական և տեղական<sup>38</sup> և սահմանում է հուշարձանների պահպանության իրավական պաշտպանություն: Մասնավորապես, օրենքն արգելում է հուշարձանների ոչնչացումը և թույլատրում է դրանց տեղաշարժը միայն բացառիկ դեպքերում<sup>39</sup>:

Հուշարձանների տեղակայման տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ տեսակի աշխատանքների համար հողի հատկացումն իրականացվում է կրթության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնությամբ: Եթե այդ աշխատանքները կարող են սպառնալ այդ տարածքներում գտնվող հուշարձանների պաշտպանությանն ու անվտանգությանը, ապա նախապես աշխատանքները նախագծողի հաշվին իրականացվում են հուշարձանների պահպանության և անվտանգության ապահովման միջոցառումներ՝ ներառյալ հետախուզական, պեղումները, վերականգնողական աշխատանքները. բացառիկ դեպքեր, փոխանցում՝ լիազոր մարմնի առաջարկած այլ աշխատանք<sup>40</sup>: Օրենքն ապահովում է նաև նորահայտ հուշարձանների պահպանությունը և նման հուշարձանի սեփականատիրոջը պարտավորեցնում է ապահովել դրա անվտանգությունը<sup>41</sup>: Հուշարձանի հայտնաբերումը թաքցնելը, դրա գրանցման և ուսումնասիրման համար խոչընդոտներ ստեղծելը, ինչպես նաև գտածոները ոչնչացնելը կամ յուրացնելը պատժվում են օրենքով<sup>42</sup>:

**10. Հավելված III. ԲՍԿ գնահատման հարցաթերթիկներ Աղյուսակ 1. ԲՍԿ նախնական գնահատում**

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի նախնական գնահատում		
Հետագա գնահատում չպահանջող գործունեության տեսակներ		
Պատասխանել այն հարցին արդյոք գործունեությունը ամբողջությամբ համընկնում է ստորև նշված ռիսկերից մեկին	Այո	Ոչ
1 Գիտելիքի կամ հաղորդակցման նյութերի պատրաստում կամ տարածում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
2 Միջոցառումների, սեմինարների կամ թրեյնինգների կազմակերպում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
3 Բանակցությունների և համաժողովների մասնակցության հմտությունների	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

<sup>37</sup> Լրացուցիչ ուղեցույցի համար տե՛ս՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կառավարման չափանիշ 8 և ուղեցույց. Հասանելի է հետևյալ հասցեով՝ [https://www.ifc.org/wpc/wcm/connect/topics\\_ext\\_content/ifc\\_external\\_corporate\\_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards/ps8](https://www.ifc.org/wpc/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/sustainability-at-ifc/policies-standards/performance-standards/ps8)

<sup>38</sup> Հավելած 6

<sup>39</sup> Հավելած 21

<sup>40</sup> Հավելած 22

<sup>41</sup> Հավելած 20

<sup>42</sup> Հոդված 9

	զարգացում		
4	Գործընկերային կապերի համակարգում և կառավարում		
5	Առանց հասցեանշման նախագիծ /օրինակ՝ գիտական համակարգեր, միջկառավարական գործընթացներ/		
<b>Բացառված գործունեությունների ցանկ</b>			
<b>Արդյոք գործունեությանը բնորոշ են ստորև նշված տարրերից</b>		<b>Այո</b>	<b>Ոչ</b>
1	Վնասարար կամ հարկադիր աշխատանք	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
2	Գործունեության վայրի երկրի օրենսդրությամբ կամ միջազգային համաձայնագրերով /կոնվենցիաներով/ անօրինական է, կամ առկա է միջազգային արգելք	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
3	Փայտե արտադրատեսակների արտադրություն կամ փայտանյութի առևտուր, բացառությամբ այն դեպքերի, երբ փայթը առաջացել է արդյունաբերական նշանակության անտառներում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
4	Զենքի կամ զինամթերքի արտադրություն կամ առևտուր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
5	Ալկոհոլային խմիչքների արտադրություն կամ առևտուր (բացառությամբ գարեջրի և գինու)	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
6	Ծխախոտի արտադրություն կամ առևտուր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
7	Դրամախաղ, կազինո կամ նմանատիպ բիզնես	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
8	Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ առևտուր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
9	Ասբեստի մանրաթելերի արտադրություն կամ առևտուր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

**Նախնական գնահատման արդյունք:**

**ԲՍԿ-ի ամբողջական/խորացված գնահատման հարցաթերթիկը**

Միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ ամբողջական/խորացված գնահատականի գործընթացը կսահմանի «նշանակության» մակարդակը յուրաքանչյուր հայտնաբերված ռիսկի/ազդեցության համար: Ազդեցությունների նշանակության գնահատման չափանիշները հիմնված կլինեն հետևյալ հիմնական տարրերի վրա.

- \* ՀՀ համապատասխան կարգավորող ակտերին, ինչպես նաև միջազգային չափանիշներին և լավագույն փորձի ուղեցույցներին համապատասխանության կարգավիճակը,
- \* Բնական կամ սոցիալ-տնտեսական միջավայրի փոփոխության մեծությունը (ներառյալ բնույթը, մասշտաբը և տևողությունը)՝ արտահայտված, որտեղ դա հնարավոր է, քանակական առումով: Բոլոր ազդեցությունների մեծությունը դիտարկվում է դրանց ազդեցության տակ գտնվողների տեսանկյունից՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի ներգրավման ընթացքում ընկալվող հավանական կարևորությունը.

- \* Ազդեցություն ընկալիչի բնույթն ու զգայունությունը (ֆիզիկական, կենսաբանական կամ մարդկային): Եթե ընկալիչը ֆիզիկական է, ապա գնահատման ժամանակ հաշվի են առնվում ընկալիչի որակը, փոփոխությունների նկատմամբ զգայունությունը և կարևորությունը: Մարդ ընկալիչի համար հաշվի է առնվում տնային տնտեսության, համայնքի կամ ավելի լայն սոցիալական խմբի զգայունությունը, ինչպես նաև նրանց կարողությունը՝ հարմարվելու և կառավարելու ազդեցության արդյունքը, և
- \* Հավանականություն (հնարավորություն), որ հայտնաբերված ազդեցությունը տեղի կունենա: Այն գնահատվում է փորձի կամ ապացույցների հիման վրա, որ նման արդյունք արդեն եղել է նախկինում:

Ընդհանրապես ընդունված է, որ նշանակությունը կախված է ազդեցության մեծությունից և դրա տեղի ունենալու հավանականությունից:

Կարևորությունը կորոշվի ըստ ստորև բերված աղյուսակներում նշված մակարդակների: Ազդեցության հավանականությունն ու հետևանքները համադրելով, ինչպես ցույց է տրված ստորև նկարում, ռիսկի յուրաքանչյուր տեսակի համար կարող է որոշվել կարևորության արժեքը (ցածր, չափավոր կամ բարձր): Ծրագրի ընդհանուր ռիսկի գնահատականը որոշվում է անհատական ռիսկի ամենաբարձր մակարդակով: Օրինակ, եթե աղյուսակ 2-ի մեկ տողը «բարձր» է, ապա ամբողջ նախագիծը դասակարգվում է որպես A (բարձր ռիսկի):

**Ռիսկի հնարավորության/հավանականության գնահատական**


Միավորը	գնահատական
5	Ակնկալվում է
4	Շատ հավանական է
3	Միջին հավանական է
2	Անհավանական է
1	Աննշան

**Ռիսկի հետևանքի/ «Ազդեցության» գնահատական**

Միավորը	գնահատականը	Սահմանումը
5	Կրիտիկական	Բնակչության և/կամ շրջակա միջավայրի վրա զգալի բացասական ազդեցություն: Բացասական ազդեցությունները զանգվածային են և/կամ տարածական են (օրինակ՝ մեծ աշխարհագրական տարածք, մեծ թվով մարդիկ, անդրսահմանային ազդեցություններ, կուտակային ազդեցություններ) և տևողությամբ (օրինակ՝ երկարաժամկետ, մշտական և/կամ անդառնալի). ազդեցության տարածքները ներառում են բարձր արժեք և զգայուն տարածքներ (օրինակ՝ արժեքավոր էկոհամակարգեր, կրիտիկական կենսամիջավայրեր), բացասական ազդեցություն փոքրամասնությունների իրավունքների, հողերի և ռեսուրսների վրա, ներառում են զգալի տեղահանում կամ վերաբնակեցում, առաջացնում են ջերմոցային գազերի զգալի արտանետումներ. բացահայտումը կարող է հանգեցնել զգալի սոցիալական բախումների:
4	Ծանր	Բացասական ազդեցություն մարդկանց և/կամ շրջակա միջավայրի վրա՝ չափավորից մեծ, մեծ տարածության և տևողության, ավելի սահմանափակ, քան կրիտիկական (օրինակ՝ կանխատեսելի, հիմնականում ժամանակավոր, շրջելի): Ծրագրի ազդեցության հնարավոր ռիսկերը, որոնք կարող են ազդել մարդու իրավունքների, հողերի, բնական ռեսուրսների, տարածքների և փոքրամասնությունների ավանդական կենսամիջոցների վրա, պետք է դիտարկվեն առնվազն որպես պոտենցիալ ծանր:
3	Չափավոր	Փոքր մագնիտուդով, սահմանափակ ուժգնությամբ (տեղանքի հատուկ) և

		տևողությամբ (ժամանակավոր) ազդեցությունները կարելի է խուսափել, կառավարել և/կամ մեղմել համեմատաբար պարզ միջոցներով:
2	Նվազագույն	Շատ սահմանափակ ազդեցությունը մասշտաբով (օրինակ՝ տուժած փոքր տարածքը, շատ քիչ մարդիկ են տուժել) և տևողությամբ (կարճաժամկետ) կարելի է հեշտությամբ կանխել, կառավարել, մեղմացնել:
1	Աննշան	Համայնքների, անհատների և/կամ շրջակա միջավայրի վրա քիչ կամ բացակայող բացասական ազդեցություն:

### Ռիսկի մատրիցայի «նշանակության» որոշում



Հավանականությունը Կանաչը՝ ցածր, Դեղինը՝ միջին, Կարմիրը՝ բարձր

### Աղյուսակ 2. Ամբողջական/խորացված գնահատման հարցաթերթիկ

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի խորացված գնահատում						
ԲՄԿՀ հարց	Այո	Ոչ	Հավանականություն (1-5)	Ազդեցություն (1-5)	Ռիսկի մակարդակ ( A, B, C կարգ)	Առաջարկվող մեղմացման / կառավարման միջոցները
<b>1. Աշխարհային և Աշխարհային պայմաններ</b>						

1. Հարկադիր աշխատանքի կամ երեխաների աշխատուժի կիրառություն գործունեությունում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>				
2. Վերջին 5 տարիների ընթացքում աշխատակիցների առողջության կամ անվտանգության հետ կապված միջադեպեր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>				
3. Տեղաբնիկների աշխատուժի կիրառում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>				
4. Աշխատանքային հարաբերություններին, աշխատողների առողջության և անվտանգության հետ կապված ներքին կանոնակարգերի առկայություն: Դրանց համապատասխանությունը աշխատանքային օրենսգրքին:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>				
<b>2. Պաշարների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում</b>						
1. Կայուն օրգանական աղտոտիչների կամ այլ քիմիական կամ վտանգավոր նյութերի առևտուր կամ օգտագործում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>				
2. Քիմիական նյութերի և/կամ վտանգավոր թափոնների կիրառում և/կամ առաջացում:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>				
